

Նամակ անցյալից. Խրիմյան Յայրիկ

Այդտեղ՝ ապագայում, հուսամ արդեն անկախ պետություն ունեք և իրագործել եք մեր դարավոր երազանքը: Եթե այո, ապա դուք հիմա ապրում եք ինչ-որ մեկի իրագործված երազանքի մեջ: Միլիոնների երազանքի մեջ: Հուսամ՝ գիտակցում եք ձեզ բաժին հասած բախտի գործությունը: Կուզենայի իմանալ՝ ինչպիսին է այդ երազանքն իրականում: Բայց քանի որ չեմ կարող աչքով տեսնել, թույլ տվեք խոսքս հղել այս նամակով, և եթե կարողաք այս տողերը՝ ես կդառնամ ձեր ներկայի և իմ ապագայի մի մասնիկը:

Երբ գնացի Բեռլինի կոնգրես՝ մեր ժողովրդի իրավունքները բարձրաձայնելու համայն աշխարհով, միայն այդ ժամ հասկացա, որ նախ և առաջ պետք է ունենալ իրավունք ունենալու իրավունք: Այդ իրավունքը նվաճում են զենքով: Երևի լսել եք երկաթե շերտի մասին: Վերադառնալով քաղաքակիրթ ազգերը, որոնք մեզ թվում էին օրինապաշտ և արդար, խղճահարությունից բացի ոչինչ մեզ չտվեցին: Ռուսաստանը, որ թվում էր՝ մեր ժողովրդի մեծ բարեկամն է, իր շահերից բացի ոչինչ չէր տեսնում և չէր լսում: Հայ ժողովուրդը կարծես ձմռան սառնամանիքին դրսում հայտնված անտիքի երեխա լինեք, որի առջև բոլորը փակեցին իրենց տան դռները: Հայ ժողովուրդը անտեր էր: Բայց ամենից կարևորը, որ ես հասկացա այն էր, որ մենք տերեր չպետք է փնտրենք դրսում:

Այդտեղ՝ ապագայում, վստահ եմ՝ դուք չեք փնտրում օտար տերերի և ձեր հույսը չեք կապում ոչ եվրոպացիների, ոչ ռուսների և ոչ էլ մեկ այլ պետության հետ: Եթե ունեք անկախ պետություն, ապա ձեր միակ տերը պետք է լինի ձեր իսկ կառավարությունը: Հուսամ, որ կառավարությունը ձեզ անտեր չի թողնում, իսկ եթե անտեր է թողնում՝ ինչ իմաստ ունի ձեր անկախությունը: Ժողովրդի ամենամեծ զոհախառնությունն այն է, որ իր միջից դուրս եկած ղեկավարներն իր հետ վարվում են նույն կերպ, ինչպես օտարները:

Մենք դարեր շարունակ ապրեցինք օտարի



ԽՐԻՄԵՆԻ ՀԱՅՐԻԿ

լծի տակ: Մեզ հետ վարվեցին դաժանորեն և անարդար, մենք փնտրեցինք արդարություն և չգտանք: Եթե ունեք անկախ պետություն, հուսով եմ՝ այդտեղ արդարություն կա: Թուրքը հայի հետ շատ անարդար վարվեց: Հայը հայի հետ մի թե կարող է նույն կերպ վարվել:

Այստեղ՝ անցյալում, մեր ժողովրդի ամենամեծ ողբերգություններից մեկն իր տգիտությունն է: Անկիրթ ժողովուրդն ինչպե՞ս կարող է իր տեղը գտնել այս խորամանկ աշխարհում: Թուրքի իշխանությունները դա թույլ չեն տալիս, քանզի մեր ժողովրդի կրթության մեջ իրենց վտանգն են տեսնում: Որքան մեծ է ժողովրդի կրթությունը, այնքան զուսպ կլինի իշխանությունը: Ես իմ ողջ կյանքը նվիրեցի հայկական գավառներում լուսավորություն տարածելուն, բայց միայնակ շատ բան չկարողացա անել: Եթե դուք պետություն ունեք՝ կրթեք մեր ժողովրդին,

լուսավորություն տարածե՛ք գավառներում: Անկիրթ ժողովուրդն անկիրթ տերերի կրնտրի, որոնք կհարստահարեն իրեն, և մի օր ստիպված՝ անկիրթ ժողովուրդն օտար տերերի կրնտրի:

Այն ժամ, երբ հասարակ ժողովուրդը գավառներում կտքնի կացության ծանր բեռի տակ, մեծահարուստ հայերը Պոլսում կապրեն ցուփ խրախճանքի մեջ: Նրանք անտարբեր են ժողովրդի դրությանը՝ կարծես օտար լինեն: Թուրքի իշխանությունները նրանց հետ նույնիսկ կդաշնակցեն, որ ժողովրդին հնազանդ պահեն: Հուսամ՝ ձեր պետության մեջ մեծահարուստներն այդպես անբարտապան չեն և չեն դաշնակցի վատ իշխանության հետ՝ ընդդեմ ժողովրդի:

Երբ 1876 թ. օսմանյան սահմանադրությունն ընդունվեց, մեզանում փրկության հույս արթնացավ: Կարծեցինք, որ հինգ հարյուր տարեկան Թուրքի պառաված և ամուլ մայրը երկնելով՝ հին աշխարհի համար նոր՝ մանուկ սահմանադրություն կծներ: Բայց մեր հույսերը չարդարացան, և ժամանակը ցույց տվեց, որ դրանք թղթին գրված գեղեցիկ տառեր էին, իսկ ժողովուրդը շարունակեց տառապել: Այդտեղ՝ ապագայում, զուցե դուք էլ գեղեցիկ սահմանադրություն և օրենքներ ունեք: Ես կփափագեմ, որ ձեր օրենքները թղթի վրա չեն ժամում, ինչպես օսմանյան սահմանադրությունը:

Եվ վերջում կուզենամ պատգամել՝ ունեցե՛ք այնպիսի դեսպաններ, ովքեր պատշաճորեն կբարձրաձայնեն ժողովրդի պահանջները համայն աշխարհին, և հոգևորականն իր հոտը թողած չի զբաղվի դիվանագիտությամբ: Ունեցե՛ք ղեկավարներ, որոնք կսիրեն ժողովրդին, զի հայ ժողովուրդը շատ է տառապել օտար ղեկավարների ատելությունից: Եվ եթե այդտեղ՝ ապագայում, անկախ պետություն ունեք, ամեն բան արե՛ք, որ այլևս երբեք, երբեք չկորցնեք ձեր անկախությունը: Եվ երբեք մի փնտրեք օտար տերերի: Եվ երբեք թող չլինի Հայ տեր, որը կվարվի ձեզ հետ օտարի պես:



Մեծն Թումանյանի ներկայացվող դատողությունը դուրս է մնացել նրա տասնհատորյակից... Դաժան ախտորոշում, որը գարմանալիորեն դիպուկ ու արդիական է հնչում հատկապես մեր օրերում:

«...Կեղծիք ու խաչագողություն՝ ամեն օր, ամեն տեղ, ամեն տեսակի:

Եվ մի ժողովուրդ, որ այսքան կեղծիքներ ու կեղծավորներ ունի, այսքան խարդախներ ու խաչագողներ, չի սիրվի, որքան կուզե խելոք լինի, որքան կուզե գոռա, թե կուլտուրական եմ ես... Նրա գործերը միշտ գետնին կման, որքան ուզում է գործիչներ ունենա: Նրա կատարած հասարակական թե՛ ազգային գործերը խախտու են միշտ: Նրա ամեն ընկերակցություն հենց սկզբից իր մեջ կրում է քայքայման բոլոր սաղմերը...»

Հովհաննես ԹՈՒՄԱՆՅԱՆ. 1907 թ.

**Ուրիշ ճանապարհ չկա.
Ներսիս է լինելու հասարակ փրկությունը,
որովհետեւ ներսից ենք փչացած...**

Հովհաննես ԹՈՒՄԱՆՅԱՆ

**Ոչ մի պաշտոն կամ Կոչում չկա,
որ հավասար լինի եւ կարելի լինի
Համեմատել մարդ Կոչումի հետ:**

Հովհաննես ԹՈՒՄԱՆՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր ԳՈՐԳԵՆ ԿԱՉԱՏՐՅԱՆԻ խոսքը՝ ՍԵՊՈՒՅ ՍՐԲԱԶԱՆԻ վաղաժամ մահվան առթիվ

ՍԵՊՈՒՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԶՈՒԼՋՅԱՆԸ՝ ԱՐԴԱՐԱՄԻՏ ԵՎ ՄԱՐՏՆՉՈՂ ՅԱՅԸ, ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ



Դժվար է պատկերացնել, թե որքան խոչընդոտներ էր հաղթահարել Եղեհայից և Աղիամանից սկիզբ առած, Մարգիս Չուլջանից ու Վարդանուշ Ռոբիփեյանից Մալաթիայում սերված մանուկ Հայկը մինչև Մեպուի արքեպիսկոպոս Չուլջան անցած ճանապարհին:

Ծնողների նախաձեռնությամբ դեռևս Մալաթիայում ինը երեխաներին էլ ծածուկ կնքել են շրջիկ քահանաները, բայց ում մտքով կանգներ, թե ինքն երեխաներից վեցերորդի կնունքը նրա կյանքում ճակատագրական դեր պիտի խաղար: Տարիների հեռվից արդեն անհնար է մատնանշել, թե ո՞ր պահին պատանի Հայկի ներաշխարհում արմատավորվեց հավատն առ Աստված: Գուցե այդ հարցում էական դեր կատարեց ծածուկ կնքված լինելու հանգամանքը, որը բացահայտվեց, երբ Տիգրանակերտի շրջիկ քահանա տեր Կիրակոս Թոքայանը Չուլջանների բազմադարյա ընտանիքի հոգսը թեթևացնելու համար մանկահասակ Հայկին և նրանից ավագ եղբորը՝ Հարությունին, Մալաթիայից բերեց Գուստանդուպոլիս, որտեղ երեք տարի նրանք հաճախում էին Խաս գյուղի Ներսիսյան նախակրթարանը, ապա՝ վարժարանը, որտեղից տեղի Ստեփանոս քահանայի ուղեկցությամբ ամենօրյա աղոթքի էին գնում վարժարանի հարևանությամբ գործող Ս. Ստեփանոս եկեղեցի: Գուցե ճակատագրական դարձավ խորհրդավոր այն օրը, երբ ծնողներն արդեն որոշել էին ներգաղթել Խորհրդային Հայաստան, և նրանց Օերուն պապը հրաժեշտի ուխտագնացություն կազմակերպեց դեպի Մալաթիայից դուրս գտնվող Սուրբ Գրիգոր Լուսավորիչ կիսախարխուլ եկեղեցին՝ մատաղավ օրհնելու իր որդու, հարսի և թոռների բազմաթիվ անհայտներով լեցուն ճանապարհը: Գուցե նա իրենց բնիկ հողում ծվեն-ծվեն եղած հայրենակիցներին ուզեց ի մի հավաքված-եկեղեցացած տեսնել, և այդ ցանկությունը նրան մղեց կուսակրոն դառնալու, որովհետև ուրիշ որտեղ էլ նա կարող էր ի մի հավաքվել իր ցրված-սփռված հայրենակիցներին, եթե ոչ եկեղեցում ... Սակայն, ինչ էլ լինի, դա կարևոր որոշում էր, որովհետև մասնավորապես Գուգարաց թեմի առաջնորդի դերն ստանձնելուց հետո նորովի դրսևորվեցին նրա մարդկային, հոգևոր, կազմակերպչական ու առաջնորդական ձիրքերը: Նա իր գործունեությունը ծավալեց երկու հիմնական ուղղություններով՝ եկեղեցուց ներս և եկեղեցուց դուրս:

Եկեղեցուց ներս գործողությունների քաղաքականությունը դրսևորվեց եկեղեցաշինության բազմաթիվ ծրագրերով, որոնց մի մասը վերաբերում էր եկեղեցու խորքային բովանդակային, մյուսները՝ արտաքին կողմին: Մասնավորապես առաջնահերթ խնդիր էր եկեղեցու խորքային բովանդակային պլանի վերանայումը, հոգևոր վերանորոգումը՝ վերականգնելու կանոնադրական, վարդապետական ու Աստվածաբանական օրենքներն ու ավանդությունները, որով եկեղեցին կդադարեր ընդամենը կառույց, լոկ շինություն լինելուց դառնալով Աստծո կենդանի խոսքի աղբյուր, ծարաված հոգիներին, բարեպաշտ հավատացյալներին դեպի իրեն ձգող կենդանի մարմին: Նրա հետևողական ջանքերով ժողովրդին վերադարձվեց ոչ միայն եկեղեցին՝ իր ազգապահպան ու ազգահավաք ծրագրերով, այլև, որ ամենակարևորն է, այդ ժողովրդի կորուսյալ հավատն առ Աստված:

Եկեղեցուց դուրս արտաքին գործողություններում անթաքույց

է թեմի առաջնորդի առաջադիր նպատակը՝ հնարավորինս խիտ ծածկել Գուգարաց թեմի տարածքը բարեկարգ, հարդարված և կանգուն աղոթատեղիներով: Անցած տարիների ընթացքում նրա նախաձեռնությամբ և անմիջական մասնակցությամբ կյանքի են կոչվել փուլված կամ կիսախարխուլ շուրջ 50 եկեղեցի և 1 տասնյակից ավել մատուռ: Կառուցվել են բոլորովին նորերը՝ շուրջ 30 եկեղեցի և մատուռ, վերականգնվել են տասնյակ անկյալ խաչեր ու զանգակատներ, տեղադրվել մի քանի տասնյակ խաչարձաններ: Սրանց բոլորի օծումը և/կամ վերածծումը գալիս են նշելու թեմում եկեղեցական կյանքի զարգացման համակարգված հետադիմ:

Մեպուի սրբազանի եկեղեցուց դուրս վարած քաղաքականությունը կատարվում էր երկու դաշտում: Դրանցից մեկը պետական-պաշտոնական միջոցառումներն էին: Նրա թեմակալության տարիներին Լոռու մարզում կյանքի կոչվեց մի կարևոր մշակույթ, ըստ որի մարզային միջոցառումներին պարտադիր հրավիրվում էր թեմի առաջնորդը, որը սովորաբար հանդես էր գալիս ժողովրդին ուղղված հորդորներով, խրատներով և օրհնանքի խոսքով՝ հասարակության մեջ անդուլ քարոզելով հայոց պետականությանը տեղ կանգնելու մասին: Պետականության գիտակցության բարձրացումն ու հայրենաձանաչությունը նա համարում էր նախապայման և սկիզբ պետականամիտության ու հայրենասիրության: Նա բոլորից պահանջում էր վերականգնել հայի արժանապատվությունը, վերականգնել կորուսյալ արժեքները: Պատմության օրինակներով նա սթափության էր հրավիրում իշխանություններին՝ կոչ անելով պարտավորություն վերցնել պատասխանատվություն կրելու և հաշվետու լինելու թերացումների ու բացթողումների համար, ապա՝ հայի հարկ եղած դեպքում մեծարում էր պետական պաշտոնյային, հորդորում հարգել ժողովրդի ծոցից ծնված իշխանավորին՝ միաժամանակ նրանից սեր ու հարգանք պահանջում երկիրն իր ուսերին պահող հայ մարդու, հայ զինորդի նկատմամբ:

Եկեղեցուց դուրս գործունեության մյուս հարթակը հանրային, ժողովրդական միջոցառումներն էին, որտեղ նույնպես Մեպուի սրբազանը հրավիրյալների առաջին շարքում էր: Այդ նա էր մշտապես կապի մեջ կրթական և նախակրթական, առողջապահական և այլ հաստատությունների հետ, արվեստի մարդկանց շրջանում:

Այդ նրա խոսքին և օրհնանքին էին սպասում ուսուցիչն ու աշակերտը, զինվորն ու սպան, գիտնականն ու բժիշկը: Նրա համար աշակերտության կրթության ու դաստիարակության կարևորությունը վեր էր ամեն ինչից:

Այս ամենը վկայությունն են այն բանի, որ Գուգարաց թեմի առաջնորդը սպառված անհատականություն էր նաև եկեղեցուց դուրս աշխարհիկ միջավայրում, որտեղ մեծ պահանջարկ ուներ նաև նրա սրտաբախ խոսքը, քանի որ այն ճշմարիտ էր, տեղին, անկեղծ և արդիական:

Լինելով հանրության տարբեր խավերի հետ անմիջական շփման կիզակետում՝ նա, որպես կանոն, առաջինն էր բարձրաձայնում մեր ժողովրդի առջև ծառացած մարտահրավերների մասին՝ դրանց վրա հրավիրելով թե՛ հոգևոր, թե՛ աշխարհիկ իշխանությունների ուշադրությունը: Սակայն նա իր դիտարկումները ոչ միայն ստակ բարձրաձայնողի-փոխանցողի դերում էր, այլև դրանով իր ցավը, անհանգստությունն ու մտահոգությունն էր փոխանցում՝ միաժամանակ առաջարկելով դրանց դիրմակայելու գործիքակազմ: Այդ նա էր ժամանակ առ ժամանակ համարձակորեն բարձրաձայնում. «Հայաստանում այսօր առավել, քան երբևէ խաթարվել է հայ մարդու հայեցի կերպարը», «Եվրոպական արժեքները, մարդու իրավունք, խղճի ազատություն, ազատ խոսք, ընտանիքի արժեքավակարգը և, մեկ խոսքով՝ ասած, ժողովրդավարական փոփոխություններ հասկացությունները, Հայաստանում այլևս անվերահսկելի են դարձել», «Այսօր ավելի, քան երբեք աշխարհասփյուռ հայության ինքնակազմակերպման հարցը կարիք ունի բոլորովին նոր մոտեցումների, որոնք համահունչ պետք է լինեն ազգի ու պետության զարգացման մեր ձգտումներին, կարիքներին ու հնարավորություններին» և այլն:

40

Նա նորի, առաջադեմ կողմնակիցն էր, բայց ոչ հինը քանդելու, կազմալուծելու, ոչնչացնելու ճանապարհով: Նա հայ առաքելական եկեղեցու բարեփոխումների հրատապությունը կարևորող այն եկեղեցականներից էր, ովքեր դրա համար ունեն լուրջ հիմնավորումներ, ովքեր գտնում էին, որ առանց եկեղեցու զարգացման առաքելության և ռազմավարության հնարավոր չէ հաջողություններ գրանցել հոգևոր դաշտում: Կարևորեմ, որ հոգևոր դաշտում արձանագրված թերացումներում Մեպուհ սրբազանը մեղավոր էր համարում նաև ինքն իրեն:

Նրան հուզող հարցերից էին նաև «հայ մարդու ազգային նկարագրի, հոգևոր անվտանգության պահպանումը», ազգային արժեքները, ազգային պետականության պահպանումն ու հզորացումը: Նրան անասելի ցավ էր պատճառում ատելության և ինքնառաջնացման մոլուցքը, որը երբեմն-երբեմն տիրում է մեր հանրությանը ...

Մեպուհ Չուլջյանի գործունեության մեջ հաճախ դժվար էր հստակորեն որոշել հոգևոր առաջնորդի, ազգային գործչի, հայ մարդու, թե՛ հայ քաղաքացու դերակատարությունն էր գերակշռում: Ավելի հաճախ դրանք ներհյուսված էին: «Ձեռք մեկնիր եղբորդ» ձեռնարկի մեջ, օրինակ, գերակշռում էր հայ քաղաքացու, մարդու դերակատարությունը, մինչդեռ էթե խորքում չլինեին նրա հոգևոր առաջնորդի բարձր վարկանիշն ու վստահության քվեն, ոչ ոք մասնակցություն չէր բերի այդ նախաձեռնությանը:

«Ծիծեռնակ» ճամբարի կազմակերպման դժվարին, բայց ազգօգուտ աշխատանքը կարող էր հարիր լինել ակտիվ հասարակական գործչին, սակայն խորքում դարձյալ տեսանելի էր հոգևոր հոր, առավել ևս՝ «անհանգիստ մարդու» (այսպես է Մուրացյանը բնութագրում է Գևորգ Մարգարյանին) մտահոգությունը առ առջնապես անապահով ընտանիքի զավակները, քանի որ, ինչպես ինքն էր ասել. «... հայ ընտանիքից են սերվում հայրենիքի վաղվա սեփականատերերը, և հայով է պայմանավորված Հայաստանի ապագան»:

Այսպես կարելի է երկար թվարկել այն նախաձեռնությունները, որոնցով ժամանակ առ ժամանակ հանդես էր գալիս սրբազան հայրը՝ փորձելով համահարթեցնել ներկա իրականությանը բնորոշ սոցիալական անհավասարությունը, փոքր-ինչ բթացնել սուր անկյունները ոչ միայն հասարակության տարբեր բնեղների, այլև իշխանությունների և ընդդիմադիր կուսակցությունների առանձին խմբերի ու անհատների միջև: Եվ իրոք, առաջնորդն այդպիսին էլ պետք է լինի՝ սիրո, համերաշխության և անձնվիրության շաղախ:

Էական է, որ այս ամենը սրբազան հայրն անում էր անտրտուն, առանց ցուցադրականության. այս ամենն իր իսկ բնույթից բխող գործելաձև էր, կենսաձև:

Որտեղ էլ սրբազան հայրն ուսանել էր, ուսուցանել, ծառայել կամ աշխատել (Կոստանդնուպոլսի Ներսիսյան վարժարան (1966-1968), Գյումրի (1969-1978), Էջմիածնի Գևորգյան Հոգևոր ճեմարան և վանք (1978-1990), Ժնև (1990-1991), խորհրդային բանակ (1979-1981), Շիրակի թեմ (1991-1995), 1996 թ. Էջմիածնի վանք, Գուգարաց թեմ 1996-2019), ամենուր եղել էր փութաջան, բայց միշտ արդյունավոր, նպատակասլաց, բայց միշտ արժանապատիվ, կարգապահ, բայց ոչ կուրորեն հնազանդ, առաջին շարքերում, բայց ոչ ամեն գնով, այլ ինքնաբերաբար, ըստ արժանվույն, որովհետև առաջինը լինելը, առաջնորդ (leader) լինելը նրա բնույթի անբաժնելի բաղադրիչներից մեկն էր: Պատահական չէ, որ նա եկեղեցում եկեղեցականների առաջնորդն էր, հանրության մեջ՝ հանրության հոգևոր առաջնորդներից մեկը:

Անասելի դժվար է պատկերել Մեպուհ արքեպիսկոպոս Չուլջյանի դիմանկարը, ներկայացնել նրա, հազար ավառ, ընդհատված կյանքը և գործունեությունը, քանզի դա նույնն է, թե պատկերես հայ ժողովրդին, նրա ծվեն-ծվեն եղած գաղթօջախները, նրա յուրաքանչյուր զավակին: Մեպուհ սրբազանը մի հավաքական կերպար

էր (և է'), հայ ժողովրդի գոնե մի մեծ հատվածի կենսակերպի, հոգեբանության, մշակույթի, լեզվամտածողության կրողը: Այդ նա էր, ով Եղիշեի հոգևոր դասի օրինակով խաչով, խաչվառով և աղոթքով անձնագոհաբար մարտի էր ելել Ավարայրում, Ջեյթունում, Մուսա լեռան վրա և Մարդարապատում: Այդ նա էր, ով Մուշում, Աղանայում, Մասունում և այլուր ցեղասպանվել էր թուրք ենիչերիների յաթաղանով, ով բռնագաղթի էր ենթարկվել և ծվարել աշխարհի չորս ծագերում, ով հատվածաբար ներգաղթել էր Մայր Հայաստան մերվելու-միավորվելու իր հայ եղբայրներին, սակայն հայրենիքից դուրս՝ «գալուր», իսկ մայր հայրենիքում պիտակավորվել էր «ախպար» ջրբաժանով և այս անգամ արդեն մայր հայրենիքից էր վերափոխվել աշխարհով մեկ: Ի բարեբախտություն մեզ մեր ժողովրդի այս հավաքական կերպարը, ի տարբերություն իր բազմահազար հայրենակիցների, մնաց իր «երազի երկիր հայրենիքում» և հավատո սերմեր ցանց ու միավորեց իր ժողովրդին հայ առաքելական եկեղեցու շուրջ, եկեղեցաշինությամբ ամրապնդեց իր հոգևոր ցանքը, Գուգարաց աշխարհին վերադարձրեց իր վաղեմի հավատն առ Աստված, որովհետև, ինչպես մեծն Սևակն էր ասում. «Առանց հավատի կյանքում դյուրին չէ նույնիսկ մեռնելը, Իսկ ապրելն ... արդեն անկարելի է»: Նա մնաց հայրենիքում և վստահության խորան դարձավ հայ բարերարի համար, տուն պարզեց տնակի հային՝ կյանքի կոչելով իր կարգախոսներից ևս մեկը՝ «Հայրենիքն է հային, որ ապրի Հայաստանը»: Նա մնաց և արդարություն քարոզեց իր Նաիրյան երկրում, իր իսկ կենսակերպով ճշմարտախոսության, համարձակության, ինքնաքննադատության, բայց և դիմացինին ձաղկելու, մարդասիրության, հանդուրժողականության, հավատարմության, դիմացինի համար հոգաբարձու դառնալու փայլուն դասեր տվեց:

Մեր ժողովրդի մի մասը մեր հայրենիքի՝ Էրզրո կոչված մեծ հատվածը կորցրել է իբրև տեղեկություն, իբրև պատմական հիշողություն, իբրև աննյութական մի բան, մինչդեռ պատվարժան այս ալյուր հայրենիքի կորուստը կրում էր իր իսկ մաշկի վրա, իր ողջ կենսագրության մեջ՝ հայրենիքի մնացորդաց կորստյան վախը սրտում: Հենց այդ էր պատճառը, որ ամեն ինչ անում էր ի նպատակ հայ պետականության կայացման, հանուն հայրենի հողի, հանուն հայ մարդու բարօրության: Նա մնաց հայրենիքում և ապրիլյան քառօրյայի ու վերջերս ավարտված հայրենական պատերազմի ծանր օրերին միասնական աղոթքի հրավիրեց առ Աստված և սատարություն հորդոր ու հայրենասիրության կոչ ուղղեց իր հոգևոր զինվորներին: Մնաց, և երբ բոլոր պապանձվում էին նահատակ գլխերի աճյունի առջև, նա սրտանդուտ ծնողին ու հուսաբեկ հարազատին բոլորի անունից ի նքր պատասխան տվեց թափված արյան համար, ի նքր միթարանքի խոսք ասաց, ի նքր գորակցեց ու վերազինեց նրանց հույսով ու հավատով առ հայրենիք ...

Դժվար է պատկերացնել, թե որքան խութեր էր հաղթահարել Եղեհայից և Աղիմանից սկիզբ առած, Մարգիս Չուլջյանից ու Վարդանուշ Մորիփեյանից Մալաթիայում սերված մանուկ Հայկը մինչև Մեպուհ արքեպիսկոպոս Չուլջյան անցած ճանապարհին, բայց անհրաժեշտ էր դրանց հաղթահարումը, քանզի այդ ճանապարհով մեզ էր հասել մեր օրերում բարձր որակների տեղ այս անհատականությունը, ով արդարամիտ և մարտնչող հայի, հոգևորականի և քաղաքացու մի նախնաձեռնի ներդաշնություն էր, ում բնույթից մինչև վերջին շունչը չպակասեց ԱՐԴՄՄՆ կիքին ու ՄԱՐՏՆԶԵԼՈՒ կամքը, ում հանապազօրյա ուղեկիցներն էին ՀԱՎԱՍՆ առ Աստված, ՀՈՒՅՄՆ առ Հայրենիք և ՄԵՐՆ առ հայ մարդը:

ՍԻՐԵԼԻՍ՝ ՍՐԲԱՇԱՆ ՀԱՅՐ,

ՈՐՈՒ ՄԵՐԱՆԳԻՍ ՅՈՐՈՐԻ ԽԱՆԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՈՒՅՍ ԻԶՆԻ ՀԱՎԱՍԱՎՈՐԻ ԵՎ ԸՆԿԵՐՈՅ ՍԻՐՈՎ ՈՒ ԽՈՆԱՐՅՈՒՄՈՎ՝

Գուրգեն ԽԱՉԱՏՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԻՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ֆրանսիական սրճարաններից մեկում նըստած և հայ տղամարդ... Ներս և մտնում մի թուրք, նայում և տղամարդուն ու շան նման ջոկում, որ հայ աս...

Կանչում և մատուցողին ու պահանջում, որ բոլոր այցելուներին իր հաշվին խմիչք բերի, բացի հայից...

Բերում և մատուցողը...

Հայը գլխով շնորհակալական ժեստ և անում թուրքի կողմը...

Սա կատաղում և, նորից և կանչում մատուցողին, նույնը պատվիրում...

Հայը նորից անվրդով շնորհակալություն և հայտնում...

Ու սենց մի քանի անգամ...


Հայը քնիծաղով, գլխով նորից շնորհակալական ժեստ և անում ու դուրս գալիս...

Հունից դուրս եկած թուրքը կանչում և մատուցողին...

– Դու գիտե՞ս ով էր էս անիքնասեր հայը... վերավորվելու տեղը շնորհակալություն էր հայտնում ...

– Ու նց չգիտեմ, սրճարանի տերն աս...


ԴԱ ՎԻՆՉԻԻ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Ե ԱՐԱՐԱՏ ՍԱՐ՞Ը ... ՓԱՍՏԵՐ



Մեզ հաճախ են մեղադրում կարևոր իրադարձությունների ու աչքի ընկնող անհատների մեջ հայկականը տեսնելու «սնապարծության» համար, բայց ինչպես ասում են եթե ծուխը կա ուրեմն կրակից է ելել: Վերածննդի հանձար Լեոնարդո դա Վինչին ևս գերծ չի մասցել հայերիս նմանօրինակ «նկրտումներից»:




Վերջերս հայկական լրատվամիջոցներով տարածվել է հետաքրքիր տեղեկություն, թե դա Վինչիի ծածկագրերի մի մասը կարդացվում է հայերեն, այն էլ ոչ թե սովորական ձևով, այլ հայելային անդրադարձմամբ, երբեմն էլ գլխիվայր շրջված: Այդ բացահայտման մասին դեռևս 2008 թ. դեկտեմբերի 25-ին ռուսական մամուլում «Դա Վինչիի ծածկագիրը» վերնագրով հոդված է հրապարակել Եգոր Օռլովը: Արվեստի պատմաբանները վաղուց բացահայտել են, որ 1452-1519 թթ. կյանքն ապրած նկարիչն ու գիտնականը, որ ամենուր գնում էր նշումների այլոքով գոտուց կախ, հազարավոր ձեռագիր էջեր է թողել, որոնց մեծ մասը ծածկագրված: Նրա շատ ծածկագրեր վաղուց վերծանվել և ուսումնասիրվել են, այդ թվում՝ լատինագիր նշումների հայելային անդրադարձումները: Տեղեկություններ կան, որ աշխատելիս Լեոնարդոն հայելիներ է օգտագործել:




Վերջին բացահայտման հեղինակը Երևանի մանկավարժական ինստիտուտի գեղանկարչության բաժնի շրջանավարտ, այժմ ՌԴ Լիպեցկ քաղաքի բնակչուհի Արմինե Խաչատրյանն է: Իրապաշտները գուցե անհավանական համարեն Արմինեի հետ կատարված, բայց պարտավոր ենք խոստովանել մեր հայրենակցուհու բացահայտման մեջ մեծ դեր է խաղացել... երազը: Հայրենիքից հեռու ապրուստ վաստակելու համար նկարչի վրձինը մոռացած

Արմինեին տարիներ առաջ երազում երևացել է գեղանկարչության նրա կուռքը Լեոնարդո դա Վինչին և առաջարկել կրկին վերադառնալ նկարչությանը ու գրել միաժամանակ երկու ձեռքով: Անհավանականը շարունակվում է Արմինեի տեսողության առանձնահատկությունների նկարագրությամբ՝ նա կարողանում է կարդալ շատ մանր գրանշանները, ասես այժերը «տասն անգամ մոտեցրած հեռադիտակի» փողեր լինեն: Սակայն այս դեպքում անհավանականը հավաստի է դառնում հոդվածին կցված բժշկական եզրակացությամբ, առ այն, որ Արմինե Խաչատրյանի տեսողությունը յուրահատուկ է: Այս ամենը քիչ է նկարչուհին նաև կարողանում է կարդալ թե հայելային անդրադարձմամբ նշանները, թե գլխիվայր շրջվածները. սա էլ երեխա ժամանակ դասերը եռափեղկ հայելու առջև սովորելու շնորհն է:




Մարգարեական երազից հետո գրախափույթ վազելով Արմինեն բացում է Վերածննդի հսկայի վերատպությունների գրքի պատահական էջը. «Ես բացեցի այն էջը, որտեղ «Միրտ» նկարն է: Նայեցի վերատպությանը և այն քաշեցի: Այն տեղում, ուր սիրտն է պատկերված, հստակ հին հայերեն տառեր տեսա»:



Դա Վինչիի գծանկարը վերծանել է Արմինե Խաչատրյանը

Գիրքը տուն տանելով՝ Արմինեն սկսել է կարդալ վերատպության անկյան գլխիվայր գրությունը. «Մասին սարի ճակատին Մուշ երկրում, ես լսեցի, որ թուրքերը խարույկի են հանել մորս բույրերին»: Տեղեկատուների օգնությամբ նա փորձել է ընթերցաձև իմաստավորել:


Հոդվածագիրը ենթադրություն է անում, թե «Միրտ» նկարում պատկերվածը ոչ թե սուկ երկու սրտեր են, հավանաբար մոր և մանկան, այլ Արարատ սարը իր երկու գագաթներով: Զմոռանալ, որ համաձայն առասպելի Միսն ու Մասիսը նման են երկու սրտերի մեծահասակի ու մանկան: Արմինեն վերծանելով ծածկագիրը եզրակացնում է, որ նկարում արտացոլված է հինգ տարեկանում մորից հեռացված Լեոնարդոյին մաշած կարոտը:



Պատմությունը ևս դա է հաստատում. այն ժամանակ, երբ նկարիչն ստեղծել է «Միրտը» Օսմանյան կայսրությունը բզկտել է Հայաստանը, որը կարճ դադարներով եղել է նաև թուրք-պարսկական կռիվների թատերաբեմ: Օռլովը եզրակացնում է. «Իրանց սարափների մասին, երևում է, նկարիչը ցանկացել է վերունդներին պատմել»: Իրոք ասվածի երբեմն-երբեմն կարծիքներ են հնչում, թե Լեոնարդոյի գեղջկուհի մայրը Գլիկիայից Իտալիա տեղափոխված հայերից է եղել:




Երբ իր վերծանած հայերեն շարադրանքը Արմինե Խաչատրյանը ցույց է տվել հայագետ Ներսես Մկրտչյանին, նա հաստատել է, որ դա 12-րդ դարի հայերեն է: 16-րդ դարի Իտալիայում 12-րդ դարի հայերենի առկայությունը նրանք բացատրում են այսպես. 12-րդ դարում մեծ թվով հայեր Գլիկիայից Իտալիա են գաղթել և ըստ երևույթին գրեթե քարացած վիճակում պահպանել իրենց հետ տարած հայերենը, մինչդեռ բնօրրանում լեզուն բնական ճանապարհով փոփոխվել է:




60

Քանի որ Լեոնարդոյի նկարների անկյուններում գրվածները վերծանելը Արմինեն շատ պարզ է թվացել, մտածել է, թե գաղտնիքը վաղուց բացահայտված է: Մակայն իր երազից ամիսներ անց լսել է, թե ինչպես է «Երեխան մոր արգանդում» նկարի գնման առնչությամբ (ձեռք բերողը եղել է Անգլիայի թագուհին) հաղորդակարն ավտոսանք հայտնում, թե այնտեղ եղած գրությունը ոչ մի կերպ չի հաջողվում վերծանել:



– Ինչպես թե, – բացականչում է նկարչուհին, – ախր այնտեղ շատ պարզ գրված է. «Վախով եմ գրում, հանկարծ մայրս չնկատի»:

Ինչպես պարզվում է Ե. Օռլովի հոդվածից Արմինեն Լեոնարդոյի վերաբերյալ իր բացահայտումների մասին գիրք է գրել: Այնտեղ այլապես հետաքրքրական տեղեկություններ կան, օրինակ Ջոկոնդայի ճակատին արված հայերեն գրության մասին «Ամպլյուս», անկյունում էլ գրված է. «Ների ր, մունետիկ» և այլն: «Ես Վաչխ» գրությունից էլ եզրակացնում է, թե դա կարող էր նկարչի կնոջն ինքն է:




Արմինե Խաչատրյանը սովորել է երկու ձեռքով միաժամանակ գրել, ինչպես ըստ երևույթին հենց Լեոնարդոն է կարողացել անել:

Լեոնարդոյի ներքոդրյալ ձեռագրերը գտել և հայելու առջև լուսանկարել են «Լույսաշխարհ» կայքի աշխատակիցները: Թեև պարզ չի երևում, բայց ըստ ընդհանուր տեսքի հայերեն գրություններ են, նշմարվում են նաև առանձին բառեր ու տառեր:

Լեոնարդո դա Վինչիի և հայերի առնչություններին բազմիցս անդրադարձել է ակադեմիկոս Գոստան Ջարյանը: Այդ թեման նրան գրվել է դեռևս 1920-ականներին, դրա շուրջ Հայաստանից դուրս դասախոսություններ է կարդացել, 1967 թ. հրապարակումներ ունեցել «Մովետական արվեստ» ամսագրում, որոնք հետագայում տեղ են գտել «Նավատորմար» ժողովածուում (1999 թ.):

Գոստան Ջարյանը բազմաթիվ փաստեր է բերում, որոնք հաստատում են Վերածննդի մեծ նկարչի, ճարտարապետի, գիտնականի և մտածողի ու հայերի առնչությունները:

Արվեստաբանների ու պատմաբանների մի մասը պնդում է, որ Լեոնարդո դա Վինչին այցելել է Գիլիկյան Հայաստան, իսկ շատերը,



հատկապես իտալացիները, ամեն կերպ դա ժխտում են, նրա «Հայկական նամակները» և տեղանքի ու դեպքերի նկարագրությունները համարում երևակայության արդյունք կամ գեղարվեստական հնարանք, ոչ ավելի, ոչ պակաս ապագա վեպի նախագիծ: Գոստան Ջարյանը բազմաթիվ հետազոտողների վկայությունների հիման վրա համոզիչ փաստեր է բերում ապացուցելու, որ Դա Վինչին հավանաբար որպես Եգիպտոսի սուլթանի ինժեներ, եղել է Գիլիկիայում, ավելին հասել է նաև Հայաստան: Դրանց վկայությունն են բնակավայրերի ու իրադարձությունների հավաստի նկարագրությունները, որոնք պատմական փաստերով ևս հաստատվում են:



Գոստան Ջարյանը հիշեցնում է, որ 15-16-րդ դարերում Ֆլորենցիայում հայերին շատ լավ են ճանաչել: Քաղաքի վրա իշխող բլրին կառուցված բազիլիկ եկեղեցին Սան-Մինիատոն, եղել է Լեոնարդոյի սիրելի վայրը: Հայտնի է, որ այդ եկեղեցին նախկինում կոչվել է Սան-Մինիաս, մի հայի անունով, ով 250 թ. Տոսկանայում քրիստոնեություն է քարոզել և տանջամահ արվել: Պատանի Լեոնարդոն հաճախ է այցելել այդ եկեղեցին, սիրել է գննել հատկապես գլխավոր խորանի խճանկարները: Եկեղեցում նա հանդիպելիս է եղել մենաստանի անապատականների հետ, որոնք հայր Լուգանոյի վկայությամբ եղել են երկարամտուր ու հրաշյա հայեր: Հենց նրանք էլ կարող էին պատմություն պատմած լինել Հայաստանի, նրա գեղեցկության և դաժան ճակատագրի մասին: Իսկ վերածննդի Ֆլորենցիայում հայտնի են եղել առնվազն մեկ տասնյակ հայ սրբեր:

Ավաճառ հիմնավորելու համար կարևոր փաստ է նաև Լեոնարդոյի ներկայանալու տեղ գտած մուգ դեղին կամ բաց շագանակագույն եզակի գույնը, որն ինքը կոչել է «տեբրա Արմենա»: Այս գույնը Մեծ նկարչից բացի ոչ ոք չի օգտագործել:



Եզրակացությունը բխում է ինքնին, թե հայոց հողի գույնն ունեցող այդ ներկը Լեոնարդոն բերել է Հայաստանից:

Գոստան Ջարյանը նշում է, որ Լեոնարդոյի ուրվանկարներից շատերը դիտելիս հնարավոր չէ դրանք հասկանալ և բացատրել, եթե նախապես բացառես, որ նա եղել է

Հայաստանում: Գրողը մեծ է համարում նաև Լեոնարդոյի դերը հայկական ճարտարապետության սկզբունքները Իտալիայում, այնուհետև Եվրոպայում արմատավորելու գործում: Նա միայն Լեոնարդոյի ազդեցությանն է վերագրում այն հանգամանքը, որ Բրամանտեն լիովին հրաժարվել է գոթական ոճից և ընդունել հայկական ճարտարապետության այն սկզբունքները, որոնք հետագայում նոր ընթացք են տվել սուրբ Պետրոսի տաճարի կառուցմանը:



Մելքոն-Արմենիա Խանջյանը ևս անդրադարձել է մեզ հուզող խնդրին: Նա գրում է. «Լեոնարդո դա Վինչիի մահից հետո հայտնաբերվել է երեք օղակ, ինչը մեծ նկարչին և գիտնականին շաղկապում է Հայաստանի հետ. դա հայկական եկեղեցու նախագիծն է՝ Բագարանի ոճով, որը հայտնաբերվել է նրա օրագրում, «Հայոց տառերը», որոնք հայկական արտագույնված են նրա օրագրում և երեք հայ տիրակալների դիմանկարները»:



Նշվում է, որ Բագարանի ոճի եկեղեցի Գիլիկյան Հայաստանում չի եղել, այն կառուցվել է Արևելյան Հայաստանում Ախուրյան գետի աջ ափին, 624-631 թթ., և միայն այնտեղ նկարիչը կարող էր գտնել և իր օրագրում վերարտադրել եկեղեցու նախագիծը: Բագարանի ոճի եկեղեցիներ կառուցվել են նաև Եվրոպայում, և նրանց ճարտարապետներն ու շինարարները հայեր են եղել: Այսպիսով վարկածն այն մասին, թե դա Վինչին այցելել է միայն Գիլիկյան Հայաստան, չի հաստատվում: Դրա օրագրում արվեստաբանները նկատել են նաև երկու էջ, որոնց վրա նկարիչը հայելանման արտացոլել է հայերեն տառերը և պատմել իր այցելության մասին Տավրոսի լեռները:

Արդեն 500 տարի հետազոտողները քրքրում են դա Վինչիի թղթերն ու ստեղծագործությունները, բացահայտումներ անում, իսկ որոշ դեպքերում ինչ-ինչ փաստեր պարտականում: Ճշմարտությունները, սակայն, ջրի երես դուրս գալու հատկություն ունեն, մտում է միայն դրանք ընդունել հավուր պատշաճի:



Մագաղաթ տեղեկատվական կայքից



Իմ սիրտը հայ է...

բարձրագույն մանկավարժական ինստիտուտում, իսկ Գերմանիայում ստացել է միսինոներական կրթություն: Տիրապետում էմ յոթ լեզուների:

1909 թվականին իմացա Ադանայում հայկական սարսափագրու կոտորածների մասին: Որոշեցի մեկնել ինձ, համար անհայտ ու հեռավոր այդ երկիրը կոտորածների հետևանքով որբացած քրիստոնյա երեխաների փրկության գործին մասնակցելու: Բնակել, ծնողներին համար, հատկապես հորս, ով քաղաքապետ էր, ուներ սեփական ջրաբուժարաններ և արհեստկրատ շրջապատ, հեշտ չէր 24-ամյա հարսնացու աղջկա նման գոհողությանը համակերպվելը, բայց ես համառեցի:

Կիլիկիա տանող կառքը անցնում էր ամենախոր կիրճի նեղ շրջադարձով, երբ թալանչի ավազակի պես անակնկալ մեր դեմը կտրեցին մի քանի թուրքեր գողալով ու չիկիչկակացնելով հրացանների փակադակները: Ես մի կերպ տեղավորվել էի հագուստների և գրենական պիտույքների կապոցների արանքում: Չհասցրի ուշքի գալ, երբ արդեն կառավարի թևերը կացեցին, իսկ սանձարձակ թուրքերից մեկը լկտիաբար պատռեց իմ միսինոներական հագուստը վավաշտո աչքերը, փայլեցնելով «Փառք Ալլահին, սրան ով ուղարկեց»: «Բորենի», չհամարձակվեա ինձ դիպել», – իմ իմացած բոլոր լեզուներով ճչում էի ես: «Գործ չունեա, Ահմեդ, գլխինդ փորձանք կրեմես, ավելի լավ է ծամանակ չկորցնես և թալանդ տեղ հասցնես», – ավելորդ գլխացավանքներից հեռու ժապու մտադրությամբ սանձարձակին զսպեցին մյուս ավազակները և թալանով հեռացան: Դա իմ առաջին ծանոթությունն էր թուրքի հետ:

1911 թվականին հասա Կիլիկիա և աշխատանքի անցա Մարաշի ծնողագուրկ հայ երեխաների համար գերմանացի ավետարանական քարոզիչների հիմնած «Բելթել» որբանոցում որպես ուսուցչուհի:

«Բելթել» բժշկուհիների հետ որբահավաքի գնացի: Կարծես դժոխքում էի: Սարիար գյուղում իմ տարեկան մի աղջկա գտա, ում զարթին փորձել էր բռնաբարել, բայց չկարողանալով հրացանի սկիտով որովայնը պատռել էր: Այդուհանդերձ, լերդացել էր, վերքը որդոտել... «Չմոտենա, – հեռվից գոռուշացրեց որբանոցի բժիշկը, – կարող է հյուծախտով հիվանդ լինել և մեր սաներին էլ վարակել»: Երբ վարժուհիները մի փոքր հեռացան սավանով արագ փաթաթեցի որբուկին, բերեցի որբանոց ու պառկեցրի իմ անկողնում: Մեծ տառապանքով նրան ոտքի հանեցի: Այդ աղջնակը հետո դարձավ միսինոներուհի և Մերձավոր Արևելքում որբախնամ այնպիսի գործունեություն ծավալեց, որ ես հայերենով գրեցի նրա վարքը: Այստեղ աշխատեցի մինչև 1915 թվականը: Երիտթուրքերի կողմից իրականացվող դժոխային կոտորածները անբուժելի վերք բացեցին համայն մարդկության խղճին ու բարոկականությանը: Ես տեսել եմ, թե ասկյարները ինչպես էին զրազ գալիս հողի հատու ոռոգվայնը սրով բացելու, որ ճշտեն տղա է, թե աղջիկ: Արդարությունը մորթվում էր, բայց չնայած խիղճը խուլ ու կույր էր ձևանում... Մամադյին արձակուրդին սաներին տարել էի Կարմիր վանք, ուր Ներսես Շնորհալին

և Գրիգոր Պահլավունին էին ուսանել և իմաստասեր օժվել: Հենց այդտեղ էլ շտապ հեռագիր ստացա քույրերիցս՝ «Մայրիկը մահամերձ է, առանց քեզ չի կարողանում հոգին Աստծուն ավանդել: Թե կարող ես հասիր»:

...Երբ երկար բացակայությունից հետո վերջապես հայրական տուն մտա, արդեն սևագգետ քույրերս սառնությամբ հանդիմանեցին. «Կարող էիր ավելի շուտ գալ... Դու տանջեցիր մայրիկին: Երբ մահացավ ծոցից քո նկարը հանեցինք, և որպեսզի այն աշխարհում էլ կարոտից հալումաշ չլինի, թաղեցինք հետը: Հայրիկն էլ վաղուց է մահացել...»: Հասկացա, որ այլևս օտար եմ մեր ընտանիքում: Ժամանակը շատ բան էր փշրել: Մտա ննջարան գոնե արցունքներիս ազատություն տալու: Մեղանին աչքիս ընկավ ֆրանսիական բողոքականների մի պարբերաթերթ՝ «Արևելքի մեր եղբայրներն ու քույրերը նորից նահատակվում են հավատի համար: Մեր թղթակիցը Մարաշից հաղորդում է, որ թուրք մոլեռանդները չորս հազար հայի լցրել են Մուրթ Աստվածածին մայր եկեղեցին, դռները ամուր փակել և հրդեհել»: Մնալս ավելորդ էր: Հենց գիշերը, առանց քույրերիս հրաժեշտ տալու, հասա կայարան: Գնացքի մութ միջանցքում արցունքներս էին ինձ միակ մխիթարողը՝ «Հայրենիքս էլ չեմ տեսնելու»:

Բժիշկը անասելի շփոթվել էր. մեկ աչքերն էր մատնելով սեղմում, մեկ ձակատը շփում մի թե հնարավոր է օտարին այսպիսի նվիրվել: Գուցե իրոք մարդկային գույք սահմաններ չի ձանաչում:

«1916-19 թթ. աշխատեցի նույն միսինոներական առաքելությանը պատկանող Մարաշից հարավ Հարունիե գյուղի գերմանական որբանոցում: Այդտեղ ես մոռացա նույնիսկ առաջին սիրո և մայրության ամենաբնական զգացմունքների մասին: Մայրամուտը թուրքական տագնալներով էր լցնում որբերի գիշերը, իսկ առավոտները ասկյարի հայտնվելն արդեն չարագուշակ տագնալ էր: Հիշելիս ամբողջ մարմնով դողում եմ, երբ 1918 թվականին թուրքական մի ջոկատ եկավ որբանոց և հայտնեց, որ պետք է հայ որբերին տեղափոխել ավելի «ապահով վայր Սիրիա»: Ես անմիջապես հասկացա, որ թուրքական այդ նենգ դիվանագիտական «ապահով վայրը» Դեր Զորի անապատն է: Ես ընկալում էի վախից, բայց համառեցի, որ դա դեմ է միջազգային օրենքներին... Նրանք լկտիաբար ծիծաղեցին: Ես պնդեցի, որ կդիմեմ Գերմանիայի, Անգլիայի, Ֆրանսիայի և մյուս երկրների հյուպատոսներին ու միջազգային առաքելություններին: Նրանք նույն լկտիությամբ պատասխանեցին, որ այդ երկրները Թուրքիայի հավերժական բարեկամներն են: Ես թուղթ վերցրի և իրենց ներկայությամբ սկսեցի նամակը: Սակայն ներք գոռուշացան ավելորդ աղմուկից և որոշեցին մեկ-երկու օր հետաձգել որբերի տեղափոխումը:

Ողջ գիշեր քնեցի: Շրջում էի որբերի մահճակալների արանքով, շոյում նրանց ոտքերն ու ձեռքերը, աղոթում Աստված այնքան ուժ տա ինձ, որ գոնե փրկեմ այս որբերին Դեր Զորի անապատից... Ամեն օր տարբեր լեզուներով գրություններ էի պատրաստում եվրոպական երկրների հյուպատոսներին,

Գերմանիայի Հայդելբերգ քաղաքի ծերանոցի հիվանդասենյակում հավաքվածները փորձում էին իննստուն անց գառամյալ Էստոնուհուն մի կերպ խոսեցնել: Եթե կտակ էլ չունենա, գոնե մի բարի խոսք կասի մնացողներին: Մի քանի լեզվով հարցեր տվեցին, բայց կինը զարմացած հայացքով իրենց էր նայում, մոլորված չգիտեր, ինչպես պատասխանել բժիշկների հարցական կիսաժպիտներին:

– Յոթ լեզու գիտի՝ Էստոներեն, ռուսերեն, ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն, թուրքերեն, հայերեն, – շտապեց տեղեկացնել խնամողը: – Արդեն մի քանի ժամ է մոռացել է բոլոր լեզուները, խոսել չի կարողանում, մեզ էլ չի հասկանում:

Մոտալուտ մահվան մահճում իր համր մենախոսությունից հետո կինը միանգամից սկսեց խոսել: Բոլորը ընկալել էին. նա խոսում էր ներկաներին անհայտ լեզվով: Հանկարծ խնամողը ծալտով պատասխանեց մահամերձին: Բոլորը շրջվեցին նրա կողմը, իսկ մահամերձը նրան մի թույլ ծալտով մոտ կանչեց ու հայերենով բոլորին ասաց՝ «Իմ սիրտը հայ է»: Հայուհին թարգմանեց: Գերմանացի բժիշկը մի պահ շփոթվեց. «Նման դեպքերում մահամերձը հատկապես իր մանկության լեզվով է խոսում: Չէ, որ հոգեվարքի ժապավենի վերջում մանկության օրերն են հայտնվում, մայրենի լեզուն, ծնողները, նրանք, ովքեր ամենաթանկն են իր համար: Այդ միայնակ Էստոնուհին Գերմանիայում ինչու է հատկապես հայերեն խոսեց, մի թե հայերն են ամենաթանկը իր համար»: Բժիշկը իր պրակտիկայում թեև նման դեպք չգտավ, բայց ակնհայտ սկսեց հիշողությունը փորփրել: Գաղթական հայուհին հասկացավ բժիշկին և նրան մեկնեց շատ ընթերցելուց արդեն մաշված մի հին օրագիր: Եսպիկին գրված էր՝ «Մենա Հեղվիգ Բյուլ, Նաոնուհի միսինոներ»: Բժիշկը խնդրեց օրագիրը կարճ ժամանակով իրեն տալ, այլապես իր մասնագիտական փորձառությունը կարող է ճաք տալ:

«ԱՆՆԱ ՀԵՂՎԻԳ ԲՅՈՒԼ: Ծնվել եմ 1887 թվականի հունվարի 23-ին՝ Էստոնիայի Հապսալու քաղաքում, լյութերական ընտանիքում: Ընտանիքի ութ զավակներից ես վեցերորդն էի: Մինչև տասնհինգ տարեկան հաճախել եմ Էստոնիայի կառավարական դպրոց, հետո սովորել Մանկտ Պետերբուրգի

80

առաքելությունների և մարդասիրական շատ կազմակերպությունների հասցեներով: Մի քանի օր անց երեք թուրք որբանոցի բակում ինձ շրջապատեցին, թուրքերեն հայոյեցին ու սպանացին, որ ինձ էլ հենց իրենց բարեկամ և օգնական գերմանացիների միջոցով Դեր Ջոր կտեղափոխեն, եթե այսպես համաձայն: Ես ընդվզեցի. «Արդեն ուր հարկն է նամակներ ուղարկել եմ: Եթե ինձ հետ որևէ բան պատահի, դուք միջազգային կազմակերպությունների պատասխան կտաք»: Թուրքերեն հայոյեցիով՝ նրանք վերջնականապես հեռացան:

1919 թվականին Կիլիկիայում քաղաքական իրավիճակը փոխվեց: Սևրի պայմանագրով Կիլիկիան անցնելու էր Ֆրանսիայի խնամակալության տակ, սակայն Ֆրանսիան զաղտնի պայմանագրով մտադրվել էր զիջել այն Թուրքիային: Շուտով ցրվեց պատերազմի ընթացքում Ֆրանսիայի դրոշի տակ կռվող Հայկական լեգեոնը և թողեց Կիլիկիայի հայերին անպաշտպան: Ես հարկադրված մեկնեցի Էստոնիա»:

Նյարդայնացած բժիշկը անհանգիստ շարժումներ արեց, բացեց պատուհանը, գիշերային գովրդ փոքր-ինչ սթափեցրեց նրան, բակում երեխաներ էին խաղում: Բժիշկը բեթոնվեյան մեղեդին նախկին հպարտությամբ չլսեց, հոգու խռովքը խանգարեց:

– Մի թե իմ ազգը թուրքին այդչափ մեղսակից է, ես դա ինչպես բացատրեմ համալսարանն ավարտած իմ տղային, ով շուտով Գերմանիայի պատմության մասին դիսերտացիա պիտի պաշտպանի, – օրագրի հետ խոսեց բժիշկը դեռևս անձանոթ տագնապով թերթերով էջը:

«1922 թվականին անդամագրվեցի Ստրասբուրգ քաղաքում հիմնադրված «Քրիստոնեական առաքելություն Արևելքի մեջ» ավետարանական մարդասիրական կազմակերպությանը և մեկնեցի Հալեպ: Այդ ժամանակ Միլիայում 160 000 հայ գաղթական կար: Նրանք հիմնականում ապրում էին Հալեպի Սուլեյմանիե և Ռամատանիե արվարձաններում կառուցված հյուղակներում («Հայկական քեմա»): Նրանք ապրում էին ծայրահեղ աղքատության ու թշվառության մեջ: Համաճարակներից օրական մի քանի հարյուր հայ էր մեռնում: Դա հայությանը ոչնչացնելու թուրքական ծրագրերից էր. համաճարակը յաթաղանի պես հնձում էր: Ես հասկացա, որ կյանքի գնով էլ լինի, պիտի մասնակցեմ հիվանդների փրկության գործին: Գերմարդկային ջանքերով, միջազգային դիվանագետներին խնդրել-աղերսելով կարողացա հիվանդանոց բացել, ուր աշխատում էին Միլիայի նշանավոր հայ բժիշկները: Մովսիսներին փրկելու համար աշխատանք էր հարկավոր: Մարաշցի իմ ծանոթների օգնությամբ ստեղծեցինք ջուլ-հականոց և ձեռագործական արհեստանոց: Հինգ հարյուր կանանց և աղջիկների կար-պետներն ու ձեռագործները վաճառվում էին եվրոպական երկրներում, իսկ հասույթը, որպես աշխատավարձ, տրվում էր կանանց: Չարչարանքս վերջապես արդյունք տվեց: Հալեպի տարբեր դպրոցներում սովորող ավելի քան 250 հայ երեխաների համար սահմանեցինք կրթաթոշակ: Որբերը շատ էին: Ես մշակեցի որդեգրման մի յուրօրինակ ձև, որի համաձայն եվրոպական բարերար ընտանիքները պետք է որդեգրեին Հալեպում հաստատված հայ գաղթական ընտանիքի երեխաներից մեկին և ամսական մեկ ոսկի ուղարկեին որդեգրվածի հարազատներին:

– Վաղուց արդեն որբերն ու գաղթական հայերը ինձ «Բյուլ մայրիկ» էին ասում: Թեև ես չամուսնացա ու զավակներ չունեցա, բայց հայ որբուկների «Մայրիկ» բառը ինձ սփռնում էր. ես այդպես սալպեցի մայրության բերկրանքը... Երբեք չեմ փոշմանել, որ կյանքս նվիրեցի հայ որբերին»:

– Տե՛ր Աստված, ո՞րն է այդ ժողովրդի մեղքը, որ Եվրոպյան աչքերը փակում էր հայկական դժոխքի վրա, – բժիշկը կականաբար ձայնալիս խոսեց անհանգիստ շուռուժուժ գալով անկողնում:

– Նորից հիվանդների հետ ես խոսում, գիշերն էլ հանգիստ չունեմ, – տրտնջալով կինը ամուսնունդն առաջարկելով քնաբեր խմել:

– Ո՛հ, ո՛հ, հիվանդների հետ չեմ խոսում, իմ ժողովրդի խղճի հետ եմ խոսում, ինչն արդեն մի քանի օր չի թողնում հանգիստ քնել, – կնոջը փորձեց բացատրել բժիշկը:

– Դա ցերեկվա գործ է, – կարճ կապեց սիրային զգվանքների հույսը կորցրած կինը և կիսախառվ շրջվեց քնելու:

Մինչև լույս իր ժողովրդի խղճի հետ կռիվ տվեց բժիշկը, հաշտվեց, նորից կովեց ու կրկին հաշտվեց: Առավոտյան օրագիրը դրեց պայուսակը աշխատանքակալում շարունակելու:

«1947-ին աշխարհասփյուռ հայությանը խորհրդային Հայաստան ներգաղթելու հնարավորություն տրվեց: Շատ սիրահայեր ուրախության արցունքներով Հայաստան հասան: Որոշել էի գնալ Հայաստան, նույնիսկ մի քանի անգամ երազում տեսա, թե ինչպես եմ հասնում Հայաստան, Երևանից Արարատ սարին էի նայում: Խնդրագիր ուղարկեցի Ներգաղթի կոմիտե: Երբ մերժում ստացա, մի քանի օր ողբում էի, ինձ որբ էի գգում: Մի թե Հայաստանը մերժում է ինձ որպես իր զավակի: Հետո իմացա, որ շատ հայրենադարձների միանգամից Միլիայ էին աքսորել որպես անբարեհույսների, օտար երկրների լուտենների: Ինձ էլ միգրացիոն թղթեր կրտես կհամարեին: Որոշեցի գոնե հայրենիք վերադառնալ, սակայն մուտքի թույլտվություն չստացա Էստոնիան Մովսիսի կազմում էր: 1951 թվականին հեռացա Հալեպից, ոչինչ չունեի... Հաստատվեցի Եվրոպայում: Ամեն օր նամակներ էի գրում աշխարհում սփռված իմ ծանոթ հայերին: Արդեն 64 տարեկան էի, շատ ուշ էր ընտանիք կազմելը: Այդ մասին 40 տարի մոռացել էի...»

Եվրոպայում կարոտում էի հայերիս: 1965 թվականին մեկնեցի Սիրիա և Լիբանան՝ մասնակցելու Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցին նվիրված միջոցառումներին Հալեպում և Բեյրութում: Աստված իմ, ինձ չէին մոռացել, ժամերով իրենց գրկի մեջ էին պահում այն որբ սաներս, որոնց մահճակալների մոտ ամբողջ գիշեր աղոթքներ էի մրմնջում... Հոգիս խաղաղվեց, վերադարձա Գերմանիա, բայց սիրտս մնաց հայոց որբանոցի դատարկ սենյակներում: Լսում եք, իմ սիրելի հայեր, ես չեմ փոշմանել, որ ամբողջ կյանքս նվիրել եմ ձեզ... ԻՄ ՄԻԲՏՀ ՀԱՅ Է»:

Ուշ գիշերային հեռախոսազանգը տագնապ արթնացրեց:

– Տիկին Անահիտ, ես ձեզ շատ մեծ խնդրանք ունեմ ինձ պիտի մի քիչ հայերեն խոսել սովորեցնեք, այն էլ մի քանի շաբաթում, – բարեբ մոռացած շատ արագ ասաց բժիշկը չիմանալով ինչպես հիմնավորել անսովոր խնդրանքը:

– Միլիայի դոկտոր, ուրախ եմ ձեզ օգտակար լինելու համար, հենց առավոտյան կգամ ձեր աշխատանքային, – ջերմությամբ պատասխանեց Անահիտը ամենկին չգուշակելով գերմանացու խորհրդավոր խնդրանքի

նպատակը:

Բյուլի օրերը հաշված էին, և բժիշկը ջանում էր կարճ ժամանակում սերտել իր ասելիքը: Ցերեղեղ Անահիտն էր պարսպալու, գիշերները հայոց լեզվի դասագիրքն էր ձեռքին: Մովսիսական մի առավոտ անթաքույց հպարտ ծայրափակ հիվանդանոցային մտավ բժիշկը՝ առանց սպիտակ խալաթի: Բուժքույրը թեթև ակնարկեց խալաթը բերել: Բժիշկը բոլորին խորհրդավոր ժպտաց «Այս պահին ես բժիշկ չեմ»:

Մոտեցավ Բյուլի անկողնուն, նստեց, ափերի մեջ առավ Բյուլի հոգնած ձեռքը, նայեց մարդը աչքերին և բոլորին անսպասելի սկսեց... հայերենով:

– Բա րե, սիրելի հայուհի Աննա Հեղվիկ Բյուլ, ես քեզ հետ խոսում եմ քո իմացած յոթ լեզուներից այն մեկով, որն արդեն քեզ համար մայրենի է հայերենով...»

Բյուլի կիսախուսի ու մարդ աչքերը մի ակնթարթ փայլեցին, նա չհասկացավ, թե ինչ կատարվեց իր հետ: Հասկացրեց, որ իրեն նստեցնել:

– Միլիայի Բյուլ մայրիկ, տեսնում եմ՝ դու էլ չես հավատում քո աչքերին, բայց ես հայերեն եմ խոսում, քո մայրենի լեզվով... Միայն քեզ եմ պարտական դրա համար: Քո օրագրից ես իմացա, որ իմ ժողովուրդն էլ մեղսակից է... Գերմանացիները նույնիսկ բացահայտ օգնել են թուրքերին, հրահանգավորել, պաշտպանել, նույնիսկ խրախուսել: Տե՛ր Աստված, ես ամաչում եմ այդ ամենի համար: Իհարկե, գերմանացի որոշ մտավորականներ քննադատել են իշխանություններին, բայց նրանց ձայնը մարել է ինչպես արդար մոմը սանձակոտոր փոթորկից: Քո շնորհիվ ճանաչեցի ու սիրեցի հայերին: Իմ սրտի մեջ էլ մի քիչ հայ արթնացավ: Գիտե՛ս ինչու սովորեցի հայերեն, դու ինձ համար մեծ հայ ես, և ես կամենում եմ քեզնից հենց հայերենով ներդրություն խնդրել իմ ժողովրդի մեղքերի համար: Հայերը շատ մեծահոգի են, շուտ են ներում: Ինձ քո ներումն է հարկավոր, սիրելի Աննա:

Բյուլի զարմանքից բացված կոպերի տակից երկու կաթիլ հպարտության արցունքներ դանդաղ զլորվեցին սմբաձ ալտերին և կնճիռներով իջան մինչև շուրթերը: Բյուլը ափերի մեջ առավ բժշկի ձեռքը, վերջին ուժերը հավաքեց ու հայերենով հաստ-հաստ շնչեց. «Ես հպարտ եմ, որ սիրտս հայ է, և որպես հայ եմ մեռնում... Միլիայի բժիշկ, դու քո ազգի խիղճն ես ու պատիվը: Ես քեզ ու քեզ նմաններին ներում եմ հայերիս կողմից: Ես գնում եմ սպանված, սովից ու համաճարակից մահացած հայ որբուկներիս մոտ...»:

Բյուլի ափերը հանգիստ թուլացան, շուրթերի արանքից վերջին շունչը հայերեն դուրս եկավ «ԻՄ ՄԻԲՏՀ ՀԱՅ Է»:


Իսկական հայ է նա, ով անկեղծորեն ու կրքոտորեն ցանկանում է ու նպատառում Հայաստանի անկախությանը: Մնացած բոլորը ոչ միայն անպիտան հայեր են, այլև անարժեք մարդիկ:

Ռաֆայել ՊՄՏԿԱՆՅԱՆ

Միայն ունենալով սեփական պետություն՝ մենք ազգ ենք: Առանց անկախ Հայաստանի, նույնիսկ եթե դա այլ տերությունների մի մասն է, մենք միայն անօթեան թափառողներ ենք, անօթեաններ ... 700 տարվա քաղաքացիություն չունեցող պատմությունը դրա ապացույցն է: Փրկենք Հայաստանը սերունդների համար ...

103

Եկ, մի՛ ձուլվիր օտար զարմին,
Իմ տարազի իմաց կոռնակ,
Եկ, խառնվիր քո երանին:
Մեզ չի կարող մահն էլ գատել,
Մի ոգի ենք ու մի մարմին,
Դու իմ Դարսի, իմ Մասունի,
Իմ Մասիսի թայ Դարաբաղ:
Մենակ դու չես, որ դիմանամ,
Յոթը դրախտ ունեն խլված,
Վանա ծովը, Դարսն ու Վանը,
Միփան սարը, Անին փլված,
Հայկ Նահապետ Մասիսի հետ
Դեռ բանտում են՝ ծունկը ծալված,
Տարտարոս է Տարոնը դեռ,
Ուր ես Ավարայր Դարաբաղ:




Ա՛խ, ե՞րբ պիտի ելնես բանտից՝
Նախիջևանի ձեռքից բռնած,
Տուն գաւ հաւիտ, Մասիսի հետ,
Դարս ու Վանի ձեռքից բռնած,
Որ ազգովին Մասիս ելնենք
Քարավանի նառից բռնած,
Նորից ազգի ավազանում հայ մկրտվես,
Հայ Դարաբաղ:
Ասում են, թե շեն է կյանքը
Առանց ազգի շենն ի՞նչ անեմ,
Երբ չի գնգուր հայոց լեզվով
Գինով թասի ձենն ի՞նչ անեմ:
Հյուսիսին ինքն էլ ամբողջում է,
Էլ իմ անգոր քենն ի՞նչ անեմ,
Գինիդ օտար թասն է խմում,
Արցունքը հայր, վայ Դարաբաղ:
Քարեկանը, որ քեզ խլեց,
Էլ թշնամին բան կտա՞ ետ,
Թե լուռ ժառ քար աշխարհիք,
Չարը Դարս ու Վան կտա՞ ետ:
Ի՞նչ դուր բախեմ, որ ծիծաղեմ,
Ասեմ՝ Նախիջևան կտա՞ ետ,
Մոլորվել եմ ես էլ քեզ պես
Պի դժ է աշխարհն ա՛յ Դարաբաղ:
Քանի իմ հող ինձ չէք տվել,
Ձեզ հելուզակ պիտի ասեմ...
Ավարայրի Վարդան դառած,
Ես ձեզ Վասակ պիտի ասեմ,
Երբ իմ բոլոր հողերն ինձ տաք,
Ձեզ հրեշտակ պիտի ասեմ,
Պիտի պաշտեմ ողջ ազգերիդ,
Երբ որ չասեմ Վայ Դարաբաղ:
Դու էլ հայոց գրկից խլված
Իմ բալիկն ես, իմ հեռավոր,
Պոռնկաշուրթ բախտիս ոտքին
Խաղալիք ես, իմ լեռնաձոր,
Բայց ինչքան էլ բալիկիս պես դու
Էլ ժառ կովախնձոր,
Շիրազն ասաց, աշխարհ անցիր,
Հայ գալիքն ես, հայ ՂԱՐԱԲԱՂ:

Մամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ «Գրական հանգրվաններ»

Արդա ՆԵՐՍԻՍՅԱՆ

Հայ գիտնականն ու բանակը



Արեգ ԴԱՆԱԳՈՒԼՅԱՆ, միջուկային ֆիզիկոս, Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտ (MIT)

Վերջապես ավարտվեց պատերազմը: Այս պատերազմում մեր կողմը տարավ որոշ փայլուն հաղթանակներ՝ հակառակորդին հսկայական կորուստներ պատճառելով, բայց նաև կրեցինք ցավալի պարտություններ: Երկար ժամանակ կպահանջվի պատերազմի փորձը ուսումնասիրելու համար, բայց այսօր արդեն որոշ ուրվագծեր պարզ են դառնում: Մեր կորուստներից մեծագույն մասը կապված է մեր կողմի տեխնիկական թերությունների և հակառակորդի տեխնիկական առավելությունների հետ: 5-րդ սերնդի զինտեխնիկական փաստորեն որոշեց այս պատերազմի ելքը:

Հայաստանը և Միջուկը ունեն գիտական բազա և գիտնականների մեծ համայնք, որը կարող է և պետք է մասնակցի պաշտպանության տեխնիկական ուժեղացման գործում:

Միանգամայն խոստովանեմ՝ ես խաղաղության մեծ կողմնակից եմ: Անգամ կասե՛ի՝ պացիֆիստ եմ: Որպես ֆիզիկոս ես աշխատում եմ միջուկային զինաթափման բնագավառում: Բայց նաև քաջ հասկանում եմ մի բան՝ հակառակորդին մի ձեռքով ձիթապտղի ճյուղ պարզելիս մյուս ձեռքում պետք է պատրաստ ունենաս լավ սրած և կոփած թուրը: Առանց վերջինի ձիթապտղի ճյուղերը դառնում են վառարանի մթերք: Այս պատերազմում պարզվեց՝ մեր թուրը բավական կոփված չէ, իսկ այն կառավարող ձեռքը՝ ոչ բավական մարզված: Սա հրատապ խնդիր է, որ պետք է ստանա շտապ լուծումներ ինչպես կարճաժամկետ, այնպես էլ ավելի երկարաժամկետ հեռանկարում:

Մի քանի օրինակ

Այս պատերազմում Ադրբեջանը արդյունավետ գործածեց թուրքական Բայքար Դիֆենս ընկերության Բայրաքթար SF2 մարտավարական ԱԹՄ-ը՝ թիրախավորելով մեր տանկային շարքայուններին, փոխադրամիջոցներին և կենդանի ուժի կուտակումներին: SF2-ի աշխատանքի որոշ մանրամասներ հայտնի են: Այն գործածում է լազերային նշանակող (laser designator)՝ թիրախը ինֆրակարմիր (ԻԿ) լազերային բծով «լուսավորելու»

համար: SF2-ը գործածում է Ռոքեթսան ՄԱՍ-Լ և ՄԱՍ-Ս կառավարվող ռումբեր՝ որոնք ունենալով ԻԿ կամերա, «տեսնում» են բիծը և շտկում են իրենց անկման հետագիծը՝ մեծ ճշտությամբ խոցելով թիրախը: Հիմնական թիրախը տանկի թույլ զրահավորված «կտուրալին» հարթակն է: Բազմաթիվ այլ մանրամասներ կան, որոնք ես այստեղ չեմ կարող քննարկել: Իմանալով հայտնի և անհայտ, բայց կանխատեսելի մանրամասներ և նրանց հետ կապված ֆիզիկական և մաթեմատիկական սահմանափակումները, կարելի է ինչ-որ կերպ հակազդել ռումբի կառավարմանը և անձնակազմի, զրահատեխնիկայի թիրախավորմանը:

Մի քանի կոնկրետ օրինակներ: Լազերային փնջի արտացոլումը դիֆուզ է և նկարագրվում է Լյամբերտյան օրենքով: Արդյոք կարելի է «մարել» այս արտացոլումը՝ ԻԿ կլանող նյութերով: Թիրախավորումը նաև անհնար կդառնա, եթե արտացոլումը ոչ թե դիֆուզ է, այլ հայելային է՝ կարող է ևս արդյոք ծածկել զրահի հայելային մակերևույթով:

Եվ վերջապես ուրիշ ի՞նչ հնարավորություններ կարող են լինել, օրինակ՝ թիրախավորումը խափանելու ակտիվ մեթոդներով:

Այստեղ պետք է հասկանալ, որ ռազմական տեխնոլոգիայում «մոգական» բաներ չկան: Գործածված մեթոդաբանությունները նույնպես շատ տարածված են էքսպերիմենտալ ֆիզիկայի և «կենսադային» էլեկտրոնային ինժեներիայի տարբեր բնագավառներում: Ավելին, ըստ որոշ տեղեկությունների՝ գործածվում են բավականին հնացած մեթոդներ: Այս մեթոդների արդյունավետությունը տանկային միավորումների դեմ ոչ թե գալիս է նրանց արդիականությունից, այլ նրանից, որ S-72 տանկը (օրինակի համար) էլ ավելի հնացած է, քան վերոհիշյալ լազերային նշանառման մեթոդները: Այս հանգամանքը մեզ պետք է խրախուսի. հավանաբար կլինեն տարբեր, մեզ հասանելի ժամանակակից, բայց էժան տեխնիկական մեթոդաբանություններ, որոնցով կարող ենք զգալիորեն նվազեցնել ԱԹՄ-ի հարվածային արդյունավետությունը:

Հայաստանի ու Ադրբեջանի միջև սահմանազատումը, Վլադիմիր Մովսիսյանի առևանգումը

Հոդային հարցը միշտ և ամենուր կենսական նշանակություն ունեցող ամենացավոտ հարցն է, հատկապես մեզ համար:

Խորհրդային տարիներին միութենական հանրապետությունների միջև սահմանները բաց էին, բնակչության տեղաշարժը ազատ: Այս հանգամանքը հնարավորություն էր տալիս Ադրբեջանի տեղական իշխանություններին տարիների ընթացքում դանդաղ, զանազան խարդախ ձևերով սողոսկել Հայաստանի տարածք: Երբ այդ երևույթը արդեն մեծ չափերի հասավ, Հայաստանի ղեկավարությունը կանխարգելիչ միջոցներ չէին:

Այդ մասին է փաստում Կարեն Դեմիրճյանի օրագրերում արված հետևյալ գրառումը.

«...Երկար տարիների աշխատանք-պայքարի արդյունքը եղավ այն, որ 1986 թ. հանրապետության սահմանները ճշգրտվեցին և Ադրբեջանից Հայաստանին հետ վերադարձվեցին 14530 հեկտար հողահանդակներ: Ես դրան հասա միայն պայքարի 10-րդ տարում: Հարցը առաջին անգամ բարձրացրի Ալիևի հետ ունեցած առաջին հանդիպման ժամանակ 1975 թ.: Դրանից հետո մի քսան-քսանհինգ անգամ տարբեր առիթներով այս հարցը իմ կողմից շրջանառվում էր Կենտկոմում, ինչպես բանավոր, այնպես էլ ՊԱԿ-ի գրավոր հաղորդումների հիման վրա: Գործին «օգնեցին» 1982-1985 թթ. ադրբեջանցիների նոր խարդախությունները, որոնք հասցրին հարևան գյուղերի բնակիչների առձակատման: Ես հանձնարարեցի ՊԱԿ-ին հատուկ հաղորդում տան կենտրոնին: Վերջին հաղորդումը զուգահեռվեց նաև իմ կտրուկ հարցադրմամբ Ե. Լիզաչովի



Վլադիմիր ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ջանքերով դեռ սովետական տարիներին Հայաստանի օգտագործման ամրագրվեց հսկայական հողատարածք...

Այն ժամանակ առևանգում և հալածում են ազերիները Վլադիմիր Մովսիսյանին, սակայն ոչ մի փաստաթուղթ չի ստորագրում հողեր հանձնելու, այլ մինչև վերջ գնում է և փաստաթուղթը մեր օգտին է ստորագրվում:

Վլադիմիր Մովսիսյանի ջանքերով դեռ սովետական տարիներին Հայաստանի օգտագործման ամրագրվեց հսկայական հողատարածք, որում առաջ էին եկել ադրբեջանցիները: «Հայրենադարձվեց Ոսկեպարի եկեղեցին». այն ժամանակ ՀԽՍՀ գործադիր իշխանության պաշտոնյա, այս ակտի ճարտարապետ Վլադիմիր Մովսիսյանի ձևակերպումն է, որին ադրբեջանցիներն առևանգել էին ու սպառնում էին կացնահարել:

առջև – մինչև երբ պետք է հանդուրժվի մի վիճակ, որը բերում է առձակատման: Դրա հիմքում ընկած է սահմանամերձ շրջանների հողային տարածքների ոչ ճիշտ սահմանազատման փաստը: Այս հանգամանքը համոզիչ եղավ և Լիզաչովը հատուկ գրությամբ մտավ Կենտկոմ, որն առաջ քաշեց իմ հարցադրումը:

Հետևեց որոշում-հանձնարարությունը, որով նախատեսվում էր երկու հանրապետությունների ղեկավարների անձնական պատասխանատվությամբ լուծել այդ վիճելի հարցը:

Մենք հանդիպեցինք Բաղիրովի հետ Սևանում, քննարկեցինք հարցը և որոշեցինք սկսել գործը (4-5 ժամ տևեց ծանր այդ հանդիպումը): Բաղիրովը և նրա գործընկերները՝ Մեդիդովը, Ագրարային նախագահ Ռաֆիզադեն և այլոք անընդհատ պնդում էին, որ ոչ մի հողային, սահմանային հարց գոյություն չունի, քանզի որքան հող տրվել է Ադրբեջանին կամ կումպենսացվել է համարժեք հողով, կամ էլ դրանք եղել են Ադրբեջանի հանրապետությանը: Այնպես որ կարիք չկա նոր ճշգրտումների: Ես և իմ գործընկերները (Ֆ. Մարգարյան, Վ. Մովսիսյան) ապացուցեցինք նրանց պնդումների անհիմնությունը և կատեգորիկ կերպով պահանջեցինք ճշգրտել սահմանները: Այս գործը պահանջեց շուրջ երկու տարվա աշխատանք: Առժամանակ դրությունը այնպես էր սրվում, որ գործը հասնում էր տաք վեճերի, նոր հանդիպումների բարձր մակարդակով: Վ. Մովսիսյանի դեմ կատարված (կազմակերպված) պրովոկացիան (երբ նրան ծեծեցին), որոշակիորեն «օգնեց» հարցի լուծման արագացմանը: Ես պաշտոնապես պահանջեցի դատական գործ հարուցել այդ դեպքի կապակցությամբ և դիմեցի ՍՄԿԿ ԿԿ: Այստեղ վերջապես զգացին դրության բարդությունը և պահանջեցին ադրբեջանական կողմից վերջ տալ այլազան պրովոկացիաներին և խարդախություններին:

Կարեն ԴԵՄԻՐԺՅԱՆ

110

Իսկ ինչ եմ արել ես

Իսկ ինչ եմ արել ես՝ հայ գիտնականս, այս վերջին ծանր պատերազմի ժամանակ: Պատերազմի առաջին օրերին ես իմ տեղը պարզապես չէի կարողանում գտնել: Դիտում էի հակառակորդի տարածած ԱԹՍ-ային հարվածների դաժան տեսա-հոլովակները, որտեղ երևում էր, թե ինչպես են զոհվում մեր ազգի լավագույնները: Ու գիշերները չէի կարողանում քնել: Հետո սկսեցի մտածել, թե ինչպես է աշխատում լազերային թիրախավորումը: Միանգամից մի-քանի մտահղացում ունեցա, որոնք, գործածելով շատ պարզ ու կարևոր էժան տեխնիկական մեթոդներ, կկարողանային մեր զինվորներին տալ վտանգի զգուշացման վաղաժամ ազդանշան:

Արագ կառուցեցի մի կոպիտ պրոտոտիպ: Այստեղ խորհրդակցեցի մի քանի ծանոթ մասնագետ ֆիզիկոսների հետ: Կապվեցի հայաստանյան մի քանի գիտնական և ինժեներ ընկերների հետ, և սկսվեց այս նախագծի արագ զարգացումը: Ընդամենը քսան օրում կառուցեցին մի քանի կատարելագործված պրոտոտիպներ, որոնք անցան թեստավորում դաշտային պայմաններում: Համոզված եմ, որ դրանք


շուտով կվերածվեն աշխատող արտադրանքի, և հույս ունեմ, որ ՊՆ-ի օգնությամբ կտարածվեն մեր զինված ուժերում: Միայն այս հասարակ փոքր (10 սմ չափսի) և էժան (\$5-10) սարքը կկարողանա ապագա առձակատման դեպքում փրկել հայրուրավոր կյանքեր: Այս ընթացքում մենք տեսանք, թե ինչպես է կատարվում ինժեներները, IT մասնագետները, ֆիզիկոսները և զինվորականները միասին աշխատեցին մի խնդրի լուծման ուղղությամբ: Եվ այն արդյունք տվեց: Եվ ավելին ասեմ՝ սա ընդամենը սկիզբն է: Դեռ կան շատ, շատ ուրիշ հնարավորություններ, որոնք մենք գտանք մեր աշխատանքի ժամանակ: Դրա մասին մեկ ուրիշ անգամ:

«Գիտնականներն ու ինժեներները պետք է միան ռազմական նշանակության խնդիրների վրա աշխատելու համար: Ինժեներական ամեն մի նման գյուղացի կարող է հարյուրավոր զինվորների կյանք փրկել և թշնամուն տալ մեծ կորուստներ»

Նաև պետք է նշեմ, որ այս ընթացքում առերեսվեցինք մի լուրջ խնդրի, որը մոտա ահավոր վրդովմունք առաջացրեց: Այս աշխատանքի ժամանակ իմացանք, որ մեր ինժեներներից մի քանիսը գորակոչվեցին առաջնագիծ: Սա սարսափելի սխալ է և ի

ցույց է դնում ՊՆ-ի կարճատեսությունը: Գիտնականներն ու ինժեներները պետք է ժառ(յի)ն ռազմական նշանակության խնդիրների վրա աշխատելու համար: Ինժեներական ամեն մի նման գյուղացի կարող է հարյուրավոր զինվորների կյանք փրկել և թշնամուն տալ մեծ կորուստներ: Այսպիսով մեկ լավ ինժեները հարյուրավոր զինվորների գործ կարող է կատարել: Որպես պատմական օրինակ 1941-ին ԽՍՀՄ-ի համար անգամ ամենահուսահատ օրերին գիտնականները ռազմաճակատ չէին ուղղարկվում: Գիտնականների առջև դրվեցին խնդիրներ, ինչի արդյունքում նրանք ԽՍՀՄ-ին տվեցին արդիական այն զենքը, որը թույլ տվեց պարտության մատնել մինչև ատաժները զինված գերմանական զորքին: Նրանք պատերազմից հետո ստեղծեցին խորհրդային միջուկային զինանոցը:

Եթե ոգևորված ընթերցողը այստեղ ուզում է մեկնաբանել «վայ, հայ գիտնականներ ջան, մեր հույսը դու քեզ», ապա միանգամից կտրեմ այդ ոգևորությունը՝ ոչ այս գործը շատ մեծ է, և հետևաբար մեզ հարկավոր է բոլորի օգնությունը: Այո, սիրելի ընթերցող, նաև քո օգնությունը: Հայաստանի ամեն քաղաքացի կարող է և պետք է մեզ օգնի այս գործընթացում: Ինչպե՞ս: Այդ մասին հաջորդ հոդվածում:



Վաճառող ՇԵՐՄԱՆՆԱՆ

Ես կանգնած եմ կարմիր դագաղի կողքին, դագաղի մեջ 94 տարեկան անկողնավոր մի պառավ է պառկած, ում տրիտիմաֆն ու հանձարը կայացել է նրանում, որ նա Լենինի մասին չորս հաստափոր գիրք է գրել: Ես ուսանող եմ, 82 թիվս եմ...

Մոտավորապես 3 ժամ առաջ, Մոսկվայի Մ. Գորկու անվան գրականության ինստիտուտի 3-րդ կուրսի մեր լսարան մտավ ռեկտորը և հայտնեց, որ մահացել է Մարիետա Շահինյանը, հետո հայացքը հատելով ինձ, խնդրեց, որ ութ ուսանող կամավորական սկզբունքով հոգեհանգստի արարողությանը ապահովեն պատվով պահակ կանգնելու մեր ինստիտուտի տրադիցիոն պարտականությունը:

Կամավորականների խումբը ձևավորվեց արագ, և մենք Տվերսկոյ բուլվարից, ոտքով, 20 րոպե անց ներկայացանք Գրողների կենտրոնական տուն (ԼԴԴՄ) ու կարմիր թևակալներով ընդունեցինք պատվով պահակի հերթապահությունը...

Երեք ժամ արդեն կանգնել ենք, ոտքերս հոգնել են, ես միշտ զգվել եմ կոմունիստական սուտ ու փչովի իդեոլոգիայից, առավել ևս նրա վառ ներկայացուցիչներից...

Վստահ եմ, նույն կերպ են մտածում պատվով պահակի դերում հայտնված իմ յոթ համակուրսեցիները, որովհետև մեր ինստիտուտը հեռու էր կոմունիստական «վեհ գաղափարների պաշտպանությունից», շնորհիվ մեզ դասավանդող մի քանի պինդ ու լուսավոր, բայց նաև հալածված դասախոսների, բայց կա ևս մեկ բայց. ուսանողների մեջ միակ հայը ես եմ և հանգուցյալի ազգանունն էլ մատնում է նրա իմ տեսակին պատկանելը ու ես պարտավոր եմ ինձ գուսպ պահել...

Կոկորդա չորացել է, հոգեհանգստի սրահում տոթ է, դիակն էլ յոթ օր պահել են, փորձելով թաղումը հարմարեցնել կուսակցական ղեկավարության փոփոխ գերզբաղված օրակարգին, որ իբր «վոժդերն» էլ

Է՛, ՅԵՏՈՒՆԶ (Թանկ հուշ Մարշալ Բաղրամյանից)

կարողանան հրաժեշտ տալ... չի ստացվել, էնպես են խրվել «ճահճի» մեջ, որ նրանց էնտեղից դուրս արձնելը դժվար է: Դիակը յոթ օր սառնարանում պահել են, լավ չեն պահել, փոքր ինչ նեխել է... և գրական, կուսակցական կոլեկտիվները, որոնց Գրեմի ցուցումով թշվ են «Հավատարիմ կոլեգային» ըստ պատշաճի ճամփու դնելու... դիակի հոտից խրտնած դժգոհում են քթների տակ ու արագ հեռանում...

Ելույթ է ունենում հերթական ճառասացը, ընկերս հաղթանալով բանաստեղծ Վալդյա Կոժմեյակինը, ով դիակի ոտքերի մոտ է կանգնած, շուտ է գալիս դեպի ինձ և ցուցամատով կտտացնում բլին, հասկացնելով, որ իր կոկորդն էլ է չորացել:

Քիչ անց, երբ մեր կես ժամանոց հերթապահությունը մյուս չորսն են փոխում, մենք դուրս ենք գալիս սրահից, որտեղ արդեն իրար փոխել ենք մի երեք անգամ ու հոգեհանգստի հերթ կանգնած բազմության արանքը ճղելով իջնում ենք գրողների նկուղի կաֆեն:

Չորս գավաթ սառը զարեջուրը մեզ ևս մեկ ժամ դիմանալու հույս է տալիս ու քանի որ անոթի ենք, տրամեսու մի քիչ լավանում է...

Երբ հետ վերադարձանք, սրահը զարմանալիորեն դատարկ գտանք, պառավի մոտ ժապեղ էր մի մարդ և մերոնցից չորսը, կարմիր թևակալներով դագաղի չորս անկյուններին մոտիկ կանգնած:

Այդ մեկը համագեցատով, հարգանք ու պատկառանք ներշնչող զինվորական էր: Նա իր մանրամասն սափրած գլուխը դագաղին հենած անձայն սգում էր, իսկ երբ քիչ անց գլուխը բարձրացրեց ու կարմիր թաշկինակով սրբեց արցունքները, իսկույն ճանաչեցի, նա էր ՀՈՎԱՀԱՆՆԵՍ ԲԱՂՐԱՄՅԱՆԸ:

Ես միանգամից ձգվեցի ու զգաստացա: Նա կարմիր թաշկինակը դրեց կիսիկի գրպանը, մտախոհ հայացքը պոստեց մեծ ու դատարկ սրահում, գլուխը դժգոհ օրորեց, հետո դանդաղ, հետաքրքրված հայացքով բոլորիս ոտքից գլուխ գննելով՝ մոտեցավ ինձ, այնչափ, որ նրա ծանր շունչը լսելի էր. ուղիղ աչքերիս մեջ նայեց ու հարցրեց.

– Հայերեն խոսո՞ւ մ ես:

– Ճիշտ այդպես, ընկեր Մարշալ, – կրկնակի ձգվեցի ես:

Նա ծանր հոգոց հանեց, նայեց հանգուցյալի դռի պսպղուն մեղալներին, հետո անսպասելի շուտ եկավ դեպի ինձ ու բարձր ասաց.

– Նա էլ էր հայ, – լռեց, կոկորդին դեմ եղածը դժվարությամբ կոխ տվեց ու շարունակեց.

– Մեր մեռելը մեզ թողեցին... Դրա համար էլ ես ու դու պիտի թաղենք նրան տղաւ:

Ես փշաքաղվեցի, զղջացի այդ կնոջ ու նրա գրական աշխատանքի հանդեպ ունեցած արհամարհանքիս համար...

Իսկ ուսանող ընկերներս անորոշ զարմանքի մեջ էին իմ ու Մարշալի միջև իրենց համար օտարաբան շփումից...

Մրահի բարձր առաստաղը արձագանքում և ետ էր վերադարձնում զինորականի բամբայինը...

Մոսկվայի հին հայկական եկեղեցու գերեզմանոցում ենք.

Ութ հոգով մեր ուսերին տանում ենք

կարմիր դագաղը: Մեր առջևից Մարշալը իր վարորդի հետ տանում է կափարիչը: Դագաղը վերցնելիս նա մեզ հորդորել է, որ եթե մեզնից որևէ մեկը հոգնի, չամաչենք. ինքը դեռ առույգ է և կարող է ուսել կաղնե փայտից սարքած ծանր դագաղը, չէ որ նրա մեջ իրեն մտերիմ մարդու դի է: Ուղեկցողը եկեղեցու մոմավաճառն է՝ Նինան, փորված գերեզմանին հասնում ենք դժվար, քարերի վրայով թռչելով, կամ դրանք տորթելով ու զղջալով, որովհետև դրանք խիտ են ու անանցանելի:

Փոսի կողքին բախեր են ու մի պարան: Մարշալը մեզ ցուցումներ է տալիս: Մենք դագաղը տեղավորում ենք հողաթմբի վրա, պարանը երկկողմանի անցկացնում տակով, կափարիչը տեղադրում վրան և իջեցնում փոսը...

Մարշալն անհանգստությունից ամբողջությամբ քրտինքի մեջ է, նա շատ դանդաղ երեք բուռ հող է գցում դագաղի վրա և մենք վերցնում ենք բախերն ու իրար փոխելով սև հողով ծածկում ենք կարմիր դագաղը, հետո բախերը դեն ենք նետում, մեզ թափ տալով փոշուց:

Բաղրամյանը գլխարկը հանում է... մենք էլ ...

Իսկական գերեզմանոցային լռություն է տիրում, 82 թվի մարտն է, մանր ձյուն է սկսում... Այդ ծանր լռության մեջ Վալդյան թեքվում է դեպի ինձ ու նորից կտտացնում բլին, կոնծելու նշան տալով, մեր ընկերները բռնացնում են էլ կտտոցը և բոլորը գլխով համաձայնության նշան են տալիս, բացի Մուհամեդից, նա չի խմում:

Կոլեկտիվի ձօթո-ից ոգեվորված Վալդյան ձեռքը ուսիս դնելով, ծիծաղող հազիվ զսպելով, ականջիս փափում է.

– Ван, поминки за тобой, ведь она не моя бабушка... а христианская традиция требует...

Ես խոստանում եմ Գրողների տան խառնրանում սեղան գցել, չէ որ նրանք իմ խաթեր ու իմ խնդրանքով են հայտնվել էստեղ...

Բաղրամյանը, որ հողաթմբի գլխին էր կանգնած, մեր ձայնի վրա շրջվում է...

– Անուղ չասի՞ր:

– Վանուշ:

– Վանուշ, Հովհաննես, Վանյա, նույն Բվանն ա էլի:

Լռություն:

– Ուրեմն լսի՞ր աղաշ, դու ինձ էսօր պետք ես, ... Ես կինը հերոս կին էր, իմ ընկերն էր... Մարթավարի աղ ու հաց պիտի անենք, ընկերներիդ էլ կանես, թող գան...

Ընկերներս նորից անորոշության մեջ են ընկել իրենց համար անբացատրելի մեր վայրկենական մտերմությունից...

Խաչակնքվում ենք: Մարշալն ու ես ձախից աջ, ժապածը աջից ձախ, բացի Մուհամեդը: Մարշալը նորից դիմում է ինձ:

– Դու իրենց ասա թող գնան եկեղեցու բակում սպասեն, իսկ ես ու դու էստեղ մի գործ էլ ունենք:

Վալդյայի բացատրում եմ Մարշալի ծրագիրը, նա լայն ժպտում է. խմելը սիրում է:

Նրանք քայլում են դեպի եկեղեցի...

130

Մտում ենք Մարշալն ու ես. նա նայում է հողաթմբին, հետո խիտ, իրար կպած, ծուռուժուտ գերեզմանաքարերին, որտեղ հայ համայնքի մեծանուն հայտնիներն են հանգչում. նրանցից շատերի գերեզմանները անխնամ են, մի քանիսը թեքված, տեղից ընկած, իսկ անուն-ազգանունները փորագրված են ռուսատառ...

Գերեզմանոցային լռությունը ճնշող է:

Մարշալը շինելի գրպանից խուսն, ածուխ և լուցկի է հանում ու պարզում ինձ. ափաչափ ածուխը վառում եմ և քար կամ որևէ հարմար բան չգտնելով՝ արագ դնում եմ հողաթմբին, որպեսզի ձեռքս չայրեն...

Մարշալից հետո ես էլ եմ խուսն գցում ու դիմում եմ նրան.

– Բայց ընկեր Մարշալ, հանգուցյալը կոմունիստ էր և աթեիստ...

Բաղրամյանը հոգոց է քաշում, նորից խուսն լցնում, ձեռքերը թափ է տալիս ու տխրաբեր եզրահանգում.

– Է, հետո ի՞նչ...

Հոգեհացի սեղանին խաշումա է, քյուֆթա, Սևանի իշխան, թթի օղին էլ Ղարաբաղից...

Իր ամենօրյա հաց ուտելու տեղն է ես կիսանկուղային փոքրիկ ու հարմարավետ հացատունը, որ թաքնվել է Սովետական բանակի անվան թատրոնի մեծ շենքի տակ:

Մարշալն ու ես հոգեհանգստի ենք, իսկ իմ ուսանող ընկերները էս սեղանի մասին խոստովանեցին Էրնեստ Հիմեկուեյի գրքերից մեկի վերնագիրը խմբագրելով.

– Это праздник, который всегда будет с нами.

Նրանք բոլորն էլ ուրախ են Մարշալի հետ ծանոթանալու համար, բայց առանձնահատուկ ուրախ են հայկական խոհանոցի խորտիկները համոտեսելու համար...

Ավելի ուշ, երբ նրանք քեֆը տնոգանում էր, բացի Մուսիսկանից, ես Մարշալի ցուցումով ու նրա իսկ վարորդի հետ կառավարական մեքենայով ընկերների ճանապարհում եմ հանրակացարան մրփելու... Վերադառնում եմ հացատուն, մի թաս էլ ենք հիշում...

Հետո արդեն ավելի ուշ փորձում եմ հրաժեշտ տալ Մարշալին, բայց նա ինձ բաց չի թողնում, ու մենք թթի օղին խմում ենք մինչև լույս...

Կյանքում չեմ մոռանա այդ գիշերը և լեզենդար հերոսին:

Մարշալը անմիջական էր՝ չափազանց... Ես նրան էղբան մարդկային, էղբան հասարակ չէի կարող պատկերացնել երբեք: Նա մինչև այդ պահը իմ մտքում լոգունգային, մոնումենտալ, կարմիր բանակի սառը ու դաժան մի զինորական էր, բայց այդ ամենը մի գիշերվա մեջ հալվեց, հալվեց մեր րբա-հեռի բաժակների մեջ, կարծես մեր Լոռվա սարերի աղբյուրներից մեկում հորս հետ էի աղ ու հաց անում, հնձից հետո...

Լուսաբացին, երբ արդեն բաժանվում էինք իրարից, Դոբրոլոբով-ի փողոցի վրա գտնվող իմ հանրակացարանի մուտքի դիմաց, ուր նա ուղեկցեց ինձ ստիպողաբար, ես իմ գոհունակությունն եմ հայտնում Մարշալին ու տղամարդավարի, ձեռք ձեռքի տալով բաժանվում ենք ու նա նորից վերադառնում

է իմ պատկերացրած դասական՝ սառը զինվորականի կերպարին...

Երբ գիշերային հերթապահը բացեց հանրակացարանի ծանր դուռը և ես ներս պետք է մտնեի ու դեռ նաև գրավոր բացատրություն տայի ուշացմանս համար... մեջքիս հնչեց Մարշալի բամբ հրամանը.

– Վանուշ, կրակ տուր ինձ...

– Չեմ ծխում ընկեր Մարշալ, իսկ ձեր տված լուցկին հողաթմբին թողեցի, աղաթն աս տհե՛նց, – արդարացա ես...

Քար լռություն:

Այդ պահը միայն է եղել իմ կյանքում, երբ գրջացել եմ, որ չեմ ծխում...

Մարշալը նորից ծանր է շնչում, նա հենվեց մեքենային. այն ճոճվեց ու փոքր ինչ ճկվեց, և ես այդ պահին մտածեցի, որ մեքենան ոչ թե նրա ֆիզիկական, այլ նրա մտքերի ծանրությունից ճկվեց, ու նրա փորագավր ծխելը չէր. մտքերն ու հուշերն էին:

Արագ կողմադրվեցի՝ մտա հանրակացարան, հերթապահ ծերուկ Ֆյոդորից թոցրի նրա լուցկին ու մեքենայի մոտ վերադառնալով վառեցի Մարշալի ծխախոտը... Նա ժպտաց ու խորը դուլափ տալով ասաց.

– Դու գրող ես, Վան դու 27 ես, ես 85, վաս-յաթ ունե՛մ անելու, ԿԵՐՏ ԿԵՐՏ ՆԻ ՄՅՈՒՏԻՏԵ...

Վասյաթը գիտես ո՞րն աս:

– Այո, ճիշտ այդպես:

– Դե ուրե՛մ կրես էս օրվա մասին... Մարտն... Մարտն լավ կին էր, հերոս կին էր, լուրջ գիտնական էր, բայց առաջին հերթին լավ մարդ էր... Կարմիր կայսրության թիվ մեկ իդեոլոգն էր. (Մարիետա Շահինյանի մասին է խոսքը), նրա գրքերը, որ քեզ պես ես էլ չեմ կարդացել, էս երկրի ֆունդամենտն աս էղել: Լենինի 124 հատոր էնցիկլոպեդիան ինքն աս խմբագրել, շատ մասն էլ ինքն աս գրել, հորինել ... Էդ մի բուռ հայ կնիկը ... որ քրոջ պես աս էղել իմ համար, բառիս բուն իմաստով աչքերը քոռացրել աս, 124 հատոր, դու ապագա գրողդ պատկերացնում ես թե էդ ինչ տառապանք աս, с ума сойти... իսկ Կրեմլից. НОЛЬ ВНИМАНИЕ.. Ես ուղն ու ծուծով զինվորական եմ, ինձ, ոնց բացատրեմ. за державу обидно: Չգնահատեցին: Ավելին, արհամարհեցին: Իսկ ինչ տվեց Մարտն Հայաստանին, դու հարցրու, էս կպատասխանեմ.

– Փի, – Մարշալը աչ ձեռքի վրա երեք մատի օպերացիա ցույց տվեց:

– Երախտամոռությունը վատ բան աս, երկկողմանի վատ բան, Վան, պարտադիր рикомет աս տարի...

Նհենց որ հիշի, ինչ էլ անես, էս կայսրության որ անկյունում էլ լինես... մեր տակդին չմոռանա... մենք էստեղ մեր տանն ենք ու տեր ենք... իսկ էստեղ դոնախ էղել ենք, դոնախ էլ գնալու ենք, ուզում աս ազգանունդ օժով վերջանա, ուզում աս ԿՄ-ով...

Մարշալը շինելի գրպանից հանեց գերմանական «ziippo» ֆիրմայի կրակայրիչը, նորից ծխախոտ վառեց. ժպտաց ու «ziippo»-ն պարզեց ինձ...

– Էս վերցրու, քեզ հիշատակ էս օրվա մասին չմերժես, բայց համ էլ չծխես...

Ես վերցրեցի հուշանվերը և ուր որ էր հարազատի պես պիտի գրկեի նրան, բայց զսպեցի ինձ... Չէ որ նա նախառաջ

Մարդարապատի զինվոր և հետո արդեն Հայրենական պատերազմի կրկնակի հերոս Մարշալ Բաղրամյանն էր:

Նա էլ մի պահ կարծես ուզում էր լայն թևերը բացել դեպի ինձ, կես քայլ առաջ եկավ, բայց նույնպես զսպեց իրեն. նա էլ գիտեր, որ ինքը Մարշալ Բաղրամյանն է...

3.9.

Նույնն էլ իր հետ արեցին, երբ նրան 7 ամիս անց (1982 թ. սեպտեմբերի 21-ին) թաղում էին Կրեմլի կարմիր պատի մեջ. Բաղրամ Ալիևի հետ լակելով էր զբաղված Կարմիրների առաջնորդ Բեմենը, ում մահը գալու էր 2 ամիս հետո. 1982 թ. նոյեմբերի 10-ին) ու թաղման ժամանակ գերեզմանափոքը շարտած Բեմենի դագաղը իր շրխկոցով ֆիքսվելու էր համաշխարհային լուրերում, որպես ճահճացած կարմիր կայսրության ավարտի սկիզբը... որի վրա ցավոք տոնսաներով հայկական արյուն ու հայ հանճարի միտք էր մսխվել...

Վանուշ ԾԵՐՄԱՆԱՅԱՆ
Երևան. 22. 08. 2020 թ.

Լուսանկարը՝ Լեոն ԴՈՍԵՓՅԱՆ



Լեո Կամսար
(Արամ Թովմասեան,
1888-1965)

«...Երբ պատերազմում գնդակը ծակում է մեկ ոտքը եւ յետոյ սպիանում, նորից կռուի գնդակը կուգես, որ այս անգամ մարմնիդ մի այլ մաս ծակուի: Գնդակը միշտ միեւնոյն ծակից անց կացնելը շատ անյարմար բան է: Բայց ռուս եւ թուրք կառավարութիւնները համաձայնութեան են եկել իրար հետ, որ հային խփելիս, գնդակը միշտ միեւնոյն ծակովն անց կացնեն...»

Փառքի ու գահի ձգտումն է մարդու մեջ սպանում մարդկայինը...

Վահրամ ՓՈՓԱՋՅԱՆ

1962, անտիպ
Լեո Կամսար (1888-1965)

100 տարի առաջ գրված նամակ՝ այսօրվա մասին... Թալեաթի նամակը հայերին



Մենք ցանկանում էինք թողնել մեկ հայ՝ այն էլ թանգարանում: Եթե այդտեղ՝ ապագայում, դուք կաք և կարդում եք այս նամակը, նշանակում է՝ մենք պարտվել ենք: Բայց մեր պարտությունը հաղթանակ չի բերում ձեզ: Եթե դահիճը չի կարողանում գլխատել զոհին՝ դա պարտություն է դահիճի, բայց ոչ հաղթանակ զոհի համար:



Հաղթանակն այն է, որ զոհի գլուխն այլևս չհայտնվի դահիճի կացնի տակ: Դահիճի համար ամեն մի զոհ հերթական է, զոհի համար յուրաքանչյուր դահիճ կարող է լինել վերջինը:


Ինձ համարում եք ձեր ատելի թշնամի ն: Մխավում եք. ձեր թշնամուն փնտրեք ոչ թե մեռածների, այլ ողջերի մեջ: Ես թշնամին եմ եղել ձեր մահացած պապերի, իսկ իմ կենդանի թոռները կարող են լինել ձեր թշնամին: Կամ էլ՝ ոչ: Ճանաչեք ձեր թշնամուն: Մեր հաջողությունն այն է, որ կարող ենք թշնամուն բարեկամ սարքել: Ձեր դժբախտությունն այն է, որ կարող եք բարեկամին սարքել թշնամի: Բայց ամենավատն այն է, որ դուք կարող եք երկու թշնամու միջից ընտրել չարյաց փոքրագույնին և դարձնել ձեր բարեկամը: Միայն թե՝ եթե դուք թշնամուն բարեկամ համարեցիք, դեռ չի նշանակում, որ նա կվարվի նույն կերպ:



Հենց այդպես վարվեցին ձեր դաշնակցական պապերը, երբ օգնեցին մեզ՝ իշխանության գալու: Կարծում էին, թե թշնամի Համիդին կարելի է հաղթել բարեկամ Երիտթուրքով: Այդպես եք գործել դուք դարեր շարունակ՝ մտածելով, թե պարսիկներին կարելի է հաղթել թուրքով, թուրքին՝ ռուսով և այդպես շարունակ: Ու քանի որ ձեր քայլերը կառուցել եք կույր հավատի, այլ ոչ թե սառը մտքի վրա, մշտապես տուժել եք այդ դյուրահավատության պատճառով:

Դուք՝ հայերդ, խելացի ժողովուրդ եք, բայց ոչ այնքան խելացի, որ

ձեր խելքն օգտագործեք խելամտորեն: Դա ձեր դժբախտությունն է: Դուք հմուտ արհեստավորներ եք, ճարպիկ առևտրականներ, արվեստի սիրահարներ: Դուք ճարպիկ եք, բայց ոչ դիվանագետ: Որովհետև ճարպկությունը հարկավոր է փոքր գործերում (ինչպես առևտուրը), իսկ դիվանագիտությունը՝ մեծ գործերում (պետություն կառուցելիս):



Դուք հմուտ եք՝ գեղեցիկ արվեստներ կերտելու հարցում, բայց ճախողակ՝ պետություն կառուցելու արվեստի հարցում: Հաջողակ եք փոքր գործերում, բայց ճախողակ՝ մեծերում: Գիտե՞ք ինչու: Որովհետև միշտ շտապում եք, ձգտում անմիջապես վայելել ձեր ցանած սերմի պտուղները: Առևտրականի պես, ով ցանկանում է անմիջապես ստանալ վաճառած ապրանքի շահույթը: Դրա համար դուք ունեք լավ առևտրականներ ամեն տեղ, բայց չունեք պետություն՝ ոչ մի տեղ: Եթե մի օր պետություն ունենաք, նկատի առե՞ք սա: Իսկ ահա մենք՝ թուրքերս, չունենք ձեր նրբագացությունը, ճարպկությունը, խորագետությունը: Փոխարենը, ունենք երկար սպասելու, մեր պապերի սկսածը քայլ առ քայլ առաջ տանելու կարողություն: Դրանից բացի, մենք կարող ենք հրաժարվել մեր նախնիների այն գործերից, որոնք որ մեզ շահեկան չեն այսօր: Վստահաբար կարող եմ ասել, որ ապագայում, մեր թոռները կհրաժարվեն ընդունել այն, ինչ մենք արեցինք ձեզ հետ: Իսկ ահա դուք պահում եք ձեր պապերից այն, ինչը հարկավոր չէ պահել, ու դրանով ձեզ համարում ավանդապաշտ: Օրինակ՝ ավանդաբար սպասում եք ինչ-որ օտար փրկիչների: Ձեր պապերը սխալվել են փրկիչների սպասելով, դուք սրբորեն կրկնում եք նրանց սխալները: Ուր էին այդ փրկիչները 1915թ.:



Չլինի՞ թե այդտեղ՝ ապագայում էլ եք փրկիչների սպասում:


Ձեզ համար միշտ ինչ-որ մեկը միջնորդում է. մեկ եվրոպական դեսպաններն են միջնորդում, մեկ՝ Հռոմի Պապը, մեկ Անգլիայի վարչապետը, մեկ՝ ռուսաց ցարը: Դուք ուրախանում, ոգևորվում եք դրանից: Կարծես թե մեծ բան է, երբ օտարն է փորձում լուծել թու կենսական հարցերը:

Ու քանի դեռ դուք ուրախանում եք այդ միջնորդներով, հույսներդ մանկամտորեն կապում նրանց հետ և ձեր ճակատագիրը դնում նրանց ճարպիկ ձեռքերում, մենք դաշնակցում ենք, պայման կապում, առ ու ծախ ենք անում նրանց հետ: Իսկ առևտրի վերջում, ձեր այդ միջնորդները, որպես մետաղադրամ, մեզ են վերադարձնում ձեր ճակատագիրը: Եվ դուք, արդեն ավանդույթ դարձած՝ հայտնվում եք կոտորած տաշտակի առջև, որը վերջում՝ մի անգամ էլ կտրելու են գլխին:

«ՆԵՄԵՍԻՍ»-ը ՇԱՅԱՆ ՆԱԹԱԼԻ (ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲՅԱՆ)-ի գաղափարն է

1919-1921 թթ., Բասահայկյանը գործուն մասնակցություն է ունեցել Դաշնակցության Նեմեսիս գործողության նախապատրաստման և կազմակերպման աշխատանքներին: Բասահայկյանի տանը բազմիցս է խոսվել Սողոմոն Թեհլերյանի մասին: Նույնիսկ որոշ կարծիքների համաձայն, Թալեաթի սպանությունը նախապես հանձնարարված է եղել Բասահայկյանին: Այդ ժամանակահատվածում, Բասահայկյանը Բեռլինում բազմիցս հանդիպել է Սողոմոն Թեհլերյանին և միասին զննել են Թալեաթի լուսանկարները: Այս զննումները նպատակ են ունեցել հայտնաբերելու Թալեաթին, ով 1921 թվականի սկզբներին հաստատվել էր Բեռլին Ալի Սալի Բեյ վաճառականի կեղծանվան տակ: Թեհլերյանի հետ, Թալեաթ փաշային մի քանի օր հետևել է նաև Բասահայկյանը: 1921 թ. մարտի 15-ին, Հարդենբուրգ փողոցի մյուս կողմում կանգնած էր Բասահայկյանը, որը պատրաստ սպասում էր, որ էթե հանկարծ Թեհլերյանը չկարողանա սպանել, նա էր սպանելու Թալեաթին: Բասահայկյանը նաև մեծ դեր ունեցավ Թեհլերյանի արդարացվան գործում: Հետևաբար Ավետիք Բասահայկյանը Թալեաթի սպանության կազմակերպիչներից էր և գտնվում էր իրադարձությունների կիզակետում:

Այս տեղեկությունները հաստատվեցին հետագայում, նրա ուղարկված և նրան հասցեագրված բազմաթիվ նամակների ու գրառումների միջոցով: Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահպանվել է Բասահայկյանին հասցեգրված Արտաշես ստորագրությամբ երեք նամակ, որոնցից մեկում գրված է. «Սիրելի Ավո, այս լուսինն մի թուղթ գրեցի քո հասցեին, որով խնդրում եմ Մուշեղի, Հակոբի և իմ անունով, որ դու Բեռլինում եղած ատեն աշխատես մեզ համար, որ մեզի թողնին Գերմանիայի,



Թուրքերու եւ մեր տարբերութիւններէն մէկն ալ շեշտուած կերպով հրապարակի վրայ է այն փաստով, որ մինչդեռ անոնք կը գործեն, մենք կը խօսինք: Եւ ինչ որ ամէնէն տխուրն է, խօսիլն ու գրելը մեզի համար դարձեր են գործ:

Շահան Նաթայի

Ուկրաինայի վրայով Կովկաս գնալ: Այստեղից երևի Աշոտն էլ մեզ կընկերանա: Խնդրում ենք, ուրեմն, այս ուղղությամբ ավելին անել...»: Նամակի հեղինակը խոստորջուլցի վրիժառու Արտաշես Գևորգյանն է, որը 1922 թվականի ամռանը Ստեփան Օտարկյանի և Պետրոս Տեր-Պողոսյանի հետ Թիֆլիսում սպանեց Խոստորջուլցի ջարդերի անմիջական կազմակերպիչ Ջեմալ փաշային:

ԱՍԱԼԱ-Ի (ՅԱՅԳԲ) ՆԱԽԱՅԱՅՐԸ. ԳՈՐԳԵՆ ՅԱՆԻԿՅԱՆ (1895-1984)



1973 թ. հունվարի 27-ին Բալթիմոր հյուրանոցում հնչում է Գուրգեն Յանիկյանի կրակոցը: Գալիֆորնիայի Սանտա-Բարբարա քաղաքի Թուրքիայի հյուպատոս Մահմեդ Բայդարի և փոխհյուպատոս Բահադր Դեմիրի սպանությունը ցնցում է աշխարհը և միջազգային հանրության ուշադրությունն ուղղում այդ «տարօրինակ ահաբեկչության» իրականացման պատճառների վրա: Յանիկյանին տրվում են «անհավասարակշիռ», «խելագար» ու նման այլ որակումներ: Ի նչն է դրդում 78-ամյա հիվանդ ու տկար ծերունուն Գուրգեն Յանիկյանին դիմել այդ քայլին, և վերջապես, ով էր Գուրգեն Յանիկյանը՝ սովորական մի հանցագործ, հոգեկան խնդիրներ ունեցող մարդ, թե իր պարտքը գիտակցող մեկը:


Գուրգեն Յանիկյանը ծնվել է 1895 թ. դեկտեմբերի 24-ին՝ Արևմտյան Հայաստանի Կարին քաղաքում: Նա վեց ամսեկան էր, երբ սկիզբ առան համալսարանի կրթությունը: Հայրը լավ հարաբերություններ ուներ Կարինում պարսկական հյուպատոսի հետ. վերջինիս օգնությամբ Յանիկյանների քսանութի հոգուց բաղկացած գերդաստանը ապաստանում



է պարսկական հյուպատոսարանում՝ փրկվելով կոտորածներից: Երկու շաբաթ պատասպարվելուց հետո նրանք լեռնային ճանապարհով տեղափոխվում են Կարսի մոտ գտնվող Քյոթաս գյուղը: Հանկարծ պարզվում է, որ Գուրգենը չկա. ցրտից անզգայացած մոր գրկից երեխան ընկել էր ճանապարհին: Մայրն ու եղբայրը Հակոբը, չնայած արգելքների հետ են դառնում և անցնելով մոտ վեց կիլոմետր՝ գտնում են Գուրգենին գրեթե անկենդան վիճակում: Իրենց մարմինների ջերմությամբ կարողանում են վերակենդանացնել երեխային: Կեց տարի անց միայն մայրը Գուրգենի և Հակոբի հետ վերադառնում է Էրզրում՝ իրենց ախոռում պահված ոսկիներն ու

փաստաթղթերը Կարս փոխադրելու նպատակով: Փորելու ընթացքում երկու թուրք գալիս բռնում են Հակոբին, գլխատում նրան՝ իրենց հետ տանելով երկաթե արկղը: Մայրն ու Գուրգենը, պատասպարված ականատես են լինում այդ տեսարանին: Հետագա ողջ կյանքի ընթացքում Գուրգենը չի կարողանում մոռանալ այդ ողբերգությունը: Քաղաքական նպատակով դառնում է պարսկահպատակ, ապա՝ ընտանիքի հետ տեղափոխվում է Շվեյցարիա, ստանում կրթություն, որը հետագայում շարունակում է՝ Թիֆլիսում և Մոսկվայում: Երբ սկսվում է Առաջին համաշխարհային պատերազմը, Յանիկյանն իր հիսուն ընկերների հետ խումբ կազմած՝ Դրոյի գնդում պարսկականություն էր ստանձնել վերաշինել քանդված կամուրջները: Այս ընթացքում նա սարսափելի տեսարանների է ականատես դառնում և որոշակի առողջական խնդիրներ ձեռք բերում: Հրամանատարի որոշմամբ մեկնում է Թիֆլիս, ապա՝ Խարկով, ուր և հանդիպում է ապագա կնոջը Շուշանիկին: 1930-ին տիկնոջ հետ մեկնում է Պարսկաստան՝ Թավրիզ, որտեղ հիմնում է առաջին մետաղաձուլարանը: Որպես արվեստագետ-քանդակագործ՝ կառավարության խնդրանքով պատրաստում է Պարսկաստանի նշանավոր անձանց ու թագավորների մետաղե արձանները: Կառավարության պատվերով կառուցում է Պարսկաստանի առաջին և մեծագույն ստորերկրյա զինագործարանը: Յանիկյանը պայմանագիր ուներ Իրանի կառավարության հետ՝ կառուցել Թեհրան-Թավրիզ երկաթգծի 315 կմ երկարությամբ մի հատված: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ԱՄՆ-ից և Մեծ Բրիտանիայից դեպի Խորհրդային Միություն զինամթերք փոխադրող նավերը մեծ կորուստներ էին կրում գերմանական սուզանավերի հարձակումներից: Այդ պատճառով

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՈՐ ԹՈՂԵՑԻՆԷ ԹՂԹԻ ՎՐԱ



– **Պարոն Դերունի, գանգը Մոսկվայից էր, – հարցրի զգուշորեն և հանեցի ձայնագրիչս:**

Նա օրորեց գլուխը.

– Ռուսները այդքան հարուստ չեն:

– **Ուրեմն Սմերիկայից էր:**

– Իսրայելից: Ինձ նույնիսկ թվում է՝ դա այն մարդն էր, որ 17 տարի խանգարեց տիեզերական անտենայիս կառուցմանը, հիմա էլ երևի տեղափոխվել է Իսրայել ու նոր գյուտս է ուզում գողանալ...

– **Փո՛ղ էր առաջարկում...**

– Այն էլ ինչքա ն... Ասում էր՝ 80 հոգանոց քո թիմով արի Թել Ավիվ, մատող դիր ցանկացած գիտական հիմնարկի վրա, ինչքան ուզում ես աշխատիր, փորձարկիր, փչացրու, մինչև ուզածիդ հասնես, հետո էլ վերադարձիր քո երկիր, գյուտդ աշխատացրու...

– **Երանի իրական մի բան լիներ:**

– Չհավատա: Մոսկվայում 5 հրեաներով իմ ռուս ղեկավարի դեմ էին աշխատում: Մի օր չլիմացա, ասացի՝ ինչ եք շակալների նման վրա տվել էս մեծ մարդուն: Դուք ուր էիք, որ նա ռադիոլոկատորներ էր սարքում: Սակվեցին: Էդ խեղճ մարդը վերջապես դրանցից ազատվեց, Մոսկվայի մոտակայքում իր հսկա լոկատորը սարքեց, ինձ էլ օգնեց, որ տիեզերական անտենաս Օրգովում սկսեմ կառուցել:

– **Ես Ձեր անտենայի մասին ռուսական հաղորդումներից եմ իմացել ու զարմացել:**

– Հա, Սենկենիչը որ եկավ մոտս, աչքերին չէր հավատում: Ասաց՝ չէր պատկերացնի, որ աշխարհում այսպիսի հրաշք կտեսնի: Իսկ դուք՝ հայ լրագրողներդ, լրիվ անտեղյակ եք: Բա ժուռնալիստը անտեղյակ կլինի: Բյուրականից այն կողմ ինչ գիտեք:

– **Դե, եկել եմ, որ իմանամ: Ասողերն ե՞ք**

ուսումնասիրում:

– Ամբողջ տիեզերքը: Գիտե՞ս ինչ բան է ռադիոալիքը:

– **Լսել եմ՝ երկար ու կարճ:**

– Այդեն: Մենք հենց դրանք ենք որսում:

– **Իսկ բանականություն կա՞:**

Հերունին հոգոց հանեց.

– Դեռ չեմ հանդիպել: Ասեղի մի անցքից ոնց որ նայես անսահմանությունը: Քանի տարի պետք կլինի... Բայց թող ոչ մի բանականություն էլ չլինի:

– **Ինչո՞ւ:**

– Լավ բանի սպասելիք չունեմ: Բսկի մարդը մարդուն չի հասկանում:

Այ, օրինակ, ռուսական դպրոցը մեզ շատ բան տվեց, շատ գիտնականներ աճեցրեց, բայց փորձիր մի բան ուզել քո երկրի հա-

Չ18

160

որոշվում է փոխադրումներն իրականացնել ցամաքային ճանապարհով՝ Իրանի տարածքով: Դաշնակիցների զինվորական ճարտարագետները Պարսից ծոցից մինչև խորհրդային սահման ճանապարհի կառուցման համար նախատեսում էին մեկ տարրուց ավելի ժամանակ: Ամերիկյան կողմն այս գործը վստահում է Յանիկյանին՝ խնդրելով ճանապարհի շինարարությունն ավարտել 10 ամսում: Խոստացված ժամկետից երեք և կես ամիս շուտ Յանիկյանն ավարտում է շինարարությունը: Ճանապարհի կառուցման ավարտից մի քանի շաբաթ անց Յանիկյանին և իր տիկնոջը՝ որպես ԱՄՆ-ի պաշտպանության գործում մեծ ներդրում ունեցած անձանց, տրվում է ամերիկյան քաղաքացիություն և պարգևներ:

Յանիկյանն իր կյանքը նվիրաբերում է Հայկական հարցին բարձրաձայնմանը: Մի գիշեր նրա աչքի առաջ գալիս է եղբայրը և Յանիկյանը վերջնականապես որոշում է անձամբ վրեժխնդիր լինել: Յանիկյանն ուներ տաճկական մի թոթաղորամ, որի վրա առկա էին թուրք նախկին նախարարների և պաշտոնյաների ստորագրությունները: Միջոցառումներից մեկի ժամանակ Յանիկյանին էին նվիրել իտալացի մի նկարչի կողմից արված նկար, որը համաձայն նվիրատուի հաղորդման՝ կախված է եղել Աբդուլ Համիդի նշարանում: Գիտակցելով, որ այդ երկու հնաժողովրդական նկարները արժեք կունենան թուրքերի համար, Յանիկյանը կարողանում է պայմանավորվել ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպանատան աշխատակիցների հետ՝ կազմակերպելու համար դրանց նվիրատվությունը: Նա հանդես է գալիս որպես

պարսիկ՝ Աղա Յանի խան անունով, ով կյանքի վերջին տարիներին ցանկանում էր տարբեր երկրներից շքանշաններ ստանալ: Հանդիպումը տեղի է ունենում Բալթիմոր հյուրանոցում: Սպանությունն իրագործելուց հետո Յանիկյանն երկար ժամանակ սպասում էր ոստիկանությանը: Խոստովանության ժամանակ նա հայտարարում է, որ ոչ մի կուսակցության, հոսանքի և խմբակցության անունից հանդես չի գալիս, նա անհատ է, ով գործել է ինքնուրույն: Դատարանում նա պատմում է. «Ես որոշել էի նախքան գործի անցնելը մի քանի խոսք ասել, որ նրանք գիտենան, թե ինչու պետք է ոչնչացվեն, և քվե եմ տա:

Դուք գիտե՞ք, որ ես հայեմ, ծնվել եմ Եգրումում, – ներկայանք գարմանքով նայում էին ինձ, – Ես գրող եմ և շատ անգամներ եմ գրել հակառակ ձեր կառավարությանը, դուք չգիտեք իմ իսկական անունը: Ես Յանի խան եմ ձեզ համար, միաժամանակ եմ Նեգրուգն եմ՝ իմ Գուրգեն անվան հակառակ կարգալի է, ես տասնյակ տարիներ որպես կեղծանուն օգտագործել էի իմ գրությունների համար, նամանավանդ այն գրվածքների, որոնք տաճիկներին էին վերաբերվում:

Հյուպատոսը կեղծ ծախտով ասաց.

– Շատ էլ լավ էս արել Յանի խան: Բայց դա անցյալում է եղել: Դուք նվերներ եք տալիս մեր երկրին, չէ՞ որ հիմա մենք բարեկամներ ենք: Մեր երկիրն էլ՝ որպես շնորհակալություն, ձեզ երկու շքանշան պիտի տա: Ես էլ իմ կողմից խոսք եմ տալիս, որ մի 5000 դոլար էլ ձեզ տրվի, որ դուք այլևս մեզ հակառակ բաներ չգրեք:

– Բարեկամներ ք, գազանների հետ բարեկամ չեմ կարող լինել: Ձեր ցեղը երկու միլիոն մեր ազգից մորթել է: Հիմա ինձ դրա մեք առաջարկում: Դուք փոխել եք ձեր երկրի

կառավարելու ձևը, բայց մնացել եք նույն կեղտոտ ազգը: Պիտի ոչնչացնեմ երկուսիդ էլ: Երկու հարված տալով հյուպատոսին՝ գիրքը դնե շարքեցի և գեղքն ուղղեց երկրորդին: Բոլոր փամփուշտները կրակեցին:

Յանիկյանի դատավարությունը հայկական կողմի պարտությունն էր, ոչ միասնական լինելու արդյունք: Բազմաթիվ կուսակցություններ, ինչպես նաև անհատներ ցանկանում էին, որ Յանիկյանն իրենց անունից հանդես գար, սակայն հայտարարեց, որ գործել է մենակ՝ իր իսկ որոշմամբ: 78-ամյա ծերունին 10 տարի բանտում անցկացնելուց հետո իշխանությունների միջնորդությամբ շարունակում է կրել պատիժը տնային կալանքի տեսքով: Նա արդեն ծանր հիվանդ էր ու մահամերձ: Մի քանի շաբաթ անց 1984 թ. մարտի 27-ին հերոսը հավերժ փակեց աչքերը: Գուրգեն Յանիկյանը բազմաթիվ գրքերի հեղինակ էր՝ «Հուլայի հաղթանակը», «Հարեմի խաչը», «Մի ամերիկացու ձայնը», «Համբարձված Հիսուսը», «Անհատը», «Գյանքի սիմֆոնիան», «Մեր Մեսիան», «Դրախտը», որոնք թարգմանվել են ֆրանսերենով, անգլերենով և գերմաներենով: Ամերիկայում հաստատվելուց հետո Յանիկյանն իր միջոցներով «Դրախտը» վերածել է 20 ժամ տևողությամբ շարժապատկերի, որտեղ պատկերված են թուրքական բարբարոսությունները: Այն կիսատ է մնում գումար չլինելու պատճառով:

Յանիկյանի գործունեության արդյունքում ծնվում է մի կազմակերպություն՝ «Հերոս Գուրգեն Յանիկյանի խմբակ» անունով, որը կարճ ժամանակ անց վերանվանվում է «Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի»:

Սևմեյա ԹեֆեթեՆՅԱՆ, ԴՅԹԻ աշխատակից

Մարդ պիտի արժեքներ գնահատող լինի



«Դյուցազնագիր» շնորհին արժանացել են թվով 22 գրքի հեղինակ հանդիսանալու առիթով. ինքս 65 տարեկանից եմ ստեղծագործում: Հազարի հասնող արձակ և չափածո գործերս միայն սիրո մասին են արարված: Յոթ հեռուստաթերթերի հյուր եմ եղել, տպագրվել են շուրջ 15 թերթերում և նույնքան ամսագրերում, այդ թվում «Գործարար» ամսագրում ու «Համայնապատկեր» հանդեսում:

Շատ բարերարություններ են կատարել մանկատներին, ծերանոցներին, եկեղեցիներին, անհատներին... Այդ բոլորը, իհարկե, հոգուս պարտքն է եղել, որ ծրագրել եմ սիրով: Մեծանուն բանաստեղծուհի Միլվա Կապուտիկյանը մի առիթով գրել էր՝ «Շատ երկրներում եմ եղել, բայց Լարիսայի համար իմ հոգում ազատ տեղ է եղել պահված...»:

Ես նրա հետ մտերիմ եմ...

